

# Գիտություն

ՀՈՒՆՎԱՐ  
№1  
(383)  
2024 թ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ Երասարակվում է 1993 թ. փետրվարից

## ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԼՄԷ ԳԱՇԵՆԱՅԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԳԻ ԳՆԱԿՎՈՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Սույն թվականի հունվարի 16-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը ընդունեց Արաբական Միացյալ Եմիրությունների Դաշնային ազգային խորհրդի պատվիրակությանը՝ Դաշնային ազգային խորհրդի պաշտպանության, ներքին գործերի և արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ և Միջազգային խորհրդարանական միության փոխնախագահ, դոկտոր Ալի Ալ-Նուայիմիի գլխավորությամբ:



տական բանակցությունը: Գիտությունը և կրթությունը կարող են լինել միասնականության հարթակ, որպեսզի ստեղծենք կամուրջներ այլ ազգերի հետ և ապահովենք ավելի լավ ապագա մեր սերունդների համար: Մենք բաց ենք համագործակցելու և կենտրոնանալու ապագայի վրա»,- ասաց դոկտոր Ալի Ալ-Նուայիմի:

Հանդիպմանը մասնակցեցին ՀՀ ԳԱԱ նախագահության անդամներ, ՀՀ ԳԱԱ համակարգի ինստիտուտների, կենտրոնների տնօրեններ, գիտական համայնքի ներկայացուցիչներ:

ու առաքելությունը՝ ակադեմիկոս Սադյանը շեշտեց միջազգային համագործակցության կարևորությունը: «Այսօր Գիտությունների ազգային ակադեմիայում իրականացվում են բարեփոխումներ՝ գիտության զարգացման ժամանակակից պահանջներին համապատասխան: Հուսով եմ, որ կկնքվեն համագործակցության պայմանագրեր նաև Արաբական Միացյալ Եմիրությունների ակադեմիաների և համալսարանների հետ: Գիտությունների ազգային ակադեմիայի ղեկավարությունը կանի ամեն հնարավորն արդյունավետ համագործակցություն զարգացնելու համար»,- ասաց Աշոտ Սադյանը:

կադեմիայի համար: Մենք միջոցներ ենք ձեռնարկում Լեռնային Ղարաբաղից տեղահանված գիտնականներին աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ: Ակնկալում եմ, որ այս ուղղությամբ արձագանքներ կլինեն նաև Արաբական Միացյալ Եմիրություններից»:

ԱՄԷ Դաշնային ազգային խորհրդի պաշտպանության, ներքին գործերի և արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ և Միջազգային խորհրդարանական միության փոխնախագահ, դոկտոր Ալի Ալ-Նուայիմի ընդունեց հանդիպման մասնակիցներին: «Հասարակարգի զարգացման գործում շատ կարևոր է գիտության և կրթության դերը: Մեր աշխարհում կան բազմաթիվ մարտահրավերներ, և մենք պետք է լինենք ունակ հարմարեցնելու գիտությունը նոր մարտահրավերներին, միասին պայքարենք այդ մարտահրավերների դեմ, կարողանանք ճիշտ օգտագործել նորագույն տեխնոլոգիան, օրինակ՝ արհես-

Այնուհետև ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի տնօրեն Արմեն Սարգսյանը ներկայացրեց կենտրոնի գործունեությունը: ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի գործունեությունը և ծրագրերը ներկայացրեց կենտրոնի տնօրեն Սահակ Գասպարյանը: ՀՀ ԳԱԱ փիլոսոֆիայի և սոցիոլոգիայի ամբիոնի և Բյուրակականի աստղադիտարանի տնօրեն Արեգ Միքայելյանը ներկայացրեց աստղադիտարանի հիմնական հետազոտական ուղղությունները և միջազգային համագործակցության փորձը: ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի տնօրեն Հրաչյա Ասատրյանը ներկայացրեց ինստիտուտի գործունեությունը, ռեսուրսները, ծառայությունները և ծրագրերը: ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Գոռ Մարգարյանը ներկայացրեց ինստիտուտի գործունեությունը:

Հանդիպման ժամանակ ցուցադրվեց ՀՀ ԳԱԱ 80-ամյակին նվիրված ֆիլմ:  
**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

## «ԱԳՐԱԲԵՋԱՆԱՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 35 ՏԱՐԻ ԱՆՑ ԵՎ 2020-2023 ԹԹ. ԱՐՑԱԽՑ ԳՆԱԿՎՈՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԺՈՂՎԸ



2023 թ. տարեվերջին ՀՀ ԳԱԱ նախագահության դաիլիճում տեղի ունեցավ «Աղբյուրաբանական փախստականությունը 35 տարի անց և 2020-2023 թթ. Արցախի փախստականությունը» թեմայով գիտաժողովնական աշխատաժողով: Աշխատաժողովը կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կիրառական մարդաբանության խումբը: Սա ըստ էության շարունակությունն էր 1988-ին սկսված աղբյուրաբանական փախստականության ուսումնասիրությունների հնգամյա ամփոփումների: Նախորդ տեղի էր ունեցել նույն դաիլիճում 2018 թ. նոյեմբերի 24-ին «Աղբյուրաբանական փախստականություն: Քաղաքական, մշակութային, հասարակական խնդիրները 30 տարի անց (պատճառներ, ընթացք, ինտեգրացիա, հեռանկարներ)» թեմայով:

րաբաղը իր տարածք ներառելու համար: Արցախահայությունը պայքարում էր, որ լինի կան անկախ պետություն, կան Հայաստանի կազմում: Արցախում պայքարն ավարտվեց նրանով, որ 1923 թ. ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ

Արցախում Շուշի դարձավ հիմնականում աղբյուրաբանական միջև 1992 թ.»:

Նա աշխատաժողովի մասնակիցներին կոչ արեց բացահայտել և ներկայացնել ոչ միայն փախստականության խնդիրը, պատճառները, հետևանքները, իրավունքի պաշտպանության հարցերը, այլև առաջարկներ ներկայացնել Արցախի ճակատագիրը որոշելու ուղղությամբ: Սա շատ կարևոր է, որովհետև Արցախը պարզապես չի կարելի թողնել առանց հայերի, ովքեր թողել են իրենց պապենական հողերը, ունեցվածքը, գերեզմանները, մշակութային դարավոր հուշարձանները:

Աղբյուրաբանական փախստականության հարցը կազմում այն դեպքում, երբ Ղարաբաղի բնակչության 94 տոկոսը հայեր էին: Աղբյուրաբանական փախստականության հարցը չամրապնդվեց և արտագործվեց: Չէր զարգացնում արդյունաբերությունը: Մարզն ուներ ագրարային տնտեսության կարգավիճակ: Մի քանի թիվ՝ դա ապացուցելու համար: Կապիտալ ներդրումների ցուցանիշը բնակչության մեկ շնչի հաշվով Ղարաբաղում կազմում էր Աղբյուրաբանական ցուցանիշի 37,6 տոկոսը: Տարածքի արդյունաբերական բեռնվածությունը երկու անգամ ցածր էր Աղբյուրաբանական միջին ցուցանիշից: Իսկ 1960-1987 թթ. տարածքի միավորի հաշվով մարզում երեք անգամ պակաս հիմնական ֆոնդեր են ստեղծվել, քան Աղբյուրաբանական: Այդպիսի քաղաքականության հետևանքով եթե 1926 թ. հայերի տեսակարար կշիռը ԼՂԻՄ-ում 94,4 տոկոս էր, ապա 1979 թ. այն կազմել է 75,9 տոկոս: Ընդ որում, եթե դիտարկում ենք Շուշի քաղաքը մինչև խորհրդային կարգերի հաստատումը, 1914 թ. դրությամբ Շուշիում հայերի տեսակարար կշիռը կազմում էր ամբողջ բնակչության 53,3 տոկոսը, իսկ թաթարներինը՝ 44,8 տոկոսը: Այսինքն՝ Շուշիի հայկական քաղաք էր:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն Արսեն Բորոյանն իր ելույթում նշեց. «Փախստականության երևույթը սկսվում է առաջին կայսրությունների հետ և մինչ օրս շարունակում է մնալ մեծ կայսրությունների քաղաքականության տիրույթում: Այս երևույթի հետազոտությունը ներկայումս պետք է հիմքեր ստեղծի հայկական պետականության ուժեղացման և գաղթականության սինդրոմը հարթադրելու համար»:

Աշխատաժողովին փախստականության տարբեր խնդիրները ներկայացվեցին 16 զեկուցումներով: Հետազոտական խմբի ղեկավար Հ. Խառատյանը ներկայացրեց Աղբյուրաբանական 20-րդ դարի ընթացքում և 21-րդ դարի սկզբին փախստականություն ծնող պատճառները՝ աղբյուրաբանական հայրենիքը կայացնելու և աղբյուրաբանական եթնո-ինքնության դժվար գործընթացը, որի հիմքերից մեկը ակնհայտ իրենց պատմական հայրենիքներում գոյատևող ժողովուրդների՝ հայերի, ուղիների, լեզգիալեզու այլ և իրանալեզու ժողովուրդների նկատմամբ անհանդուրժողականությունն է, բայց մասնավորապես ռասիզմի հասնող հայատյացությունը,

որի հետևանքով խորհրդային տարիներին հայաթափվեց Նախիջևանը, արտագաղթեց հայերի պատմական հայրենիքի՝ Աղբյուրաբանական տարածքում մնացած հատվածի հայերի մեծ մասը, և որի ազդեցիկ պոթենցիալները 20-րդ դարի վերջերին դրսևորվեցին հատկապես Սումգայիթի, Բաքվի, Մարաղայի հայերի դաժան ջարդերով, հայերի դեպորտացիայով և հայկական մշակութային ժառանգության բարբարոսական ոչնչացումով Նախիջևանում:

Ըստ վերլուծաբանների՝ Աղբյուրաբանական փախստականությունը, ովքեր դեռևս 15 տարի առաջ դիմում էին միջազգային կառույցներին՝ պայմաններ ստեղծել հայրենիք վերադառնալու համար, 2020 և 2023 թթ. պատերազմներից հետո գտնվում են, որ ոչ մի մարդապիրական կառույց մտադիր չէ օգնել իրենց այդ հարցում: Միաժամանակ վստահ են, որ Աղբյուրաբանական խրատակով հայատյացությունը, որևէ դիմադրության չհանդիպելով միջազգային կառույցների կողմից, այնպիսի ծավալների է հասել, որ էթնիկական հայի գոյությունն այդ երկրում տեսանելի ապագայում անհնար է:

Գիտաժողով-աշխատաժողովի երրորդ մասն ամբողջովին նվիրված էր 2020 թ. և 2023 թ. պատերազմի հետևանքով ամբողջովին փախստական դարձած արցախահայության խնդիրներին: Ըստ վերլուծաբանների՝ Արցախի փախստական հայությունը խիստ կարևորում է իր հավաքական մշակութային ինքնության պահպանությունը և սպասում է, որ Հայաստանի կառավարությունը պայմաններ կստեղծի իրենց հավաքական բնակչության համար, մինչև իրենք կարողանան հայրենիք վերադառնալ:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**

Աշխատաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը:  
«Աշխատաժողովը շատ կարևոր թեմայի է նվիրված: Այն ունի ոչ միայն գիտական, այլև գործնական մշակութային հատկապես մեր օրերում: Աղբյուրաբանական փախստականությունը հետևանք էր Ղարաբաղյան շարժման երկրորդ փուլի: Առաջին փուլը սկսվել է 1918 թ., երբ ստեղծվեց Աղբյուրաբանական պետությունը և սկսեց պայքար՝ Ղա-

Որպեսզի փոխեն բնակչության կազմը, Շուշիում 1920 թ. մարտի 23-ին կազմակերպվեց ցեղասպանությանը համազոր ուժի, որի հետևանքով 10,000 հայ սպանվեց:

2023 թ. հոկտեմբերի 19-ին ՀՀ կառավարությունը հաստատեց «Ակադեմիական քաղաք» ծրագրի հայեցակարգը, ըստ որի՝ Երևանի 17-րդ թաղամասին կից կառուցվելու է 700 հա մակերեսով առանձին քաղաք:

Կառավարությունը նախատեսում է միավորել Հայաստանի պետական բուհերն ու գիտահետազոտական ինստիտուտները հետևյալ կլաստերներում՝ տեխնոլոգիական, արվեստների, կրթական, սպայական, դասական և բժշկական: Առաջին չորսը տեղակայվելու են նոր կառուցվող Ակադեմիական քաղաքի տարածքում: Մյուս երկուսն առայժմ կմնան Երևանում:


Ավելի վաղ ԿԳՄՍ նախարարությունը ՀՀ պետական բուհերին և գիտահետազոտական կազմակերպություններին առաջարկել էր մինչև 2024 թվականի փետրվարի 15-ը ներկայացնել հայեցակարգային առաջարկություններ ՀՀ պետական բուհերի խոշորացման և գիտահետազոտական կազմակերպությունների հետ միավորման գործընթացի վերաբերյալ:

Միաժամանակ նախարարությունը տեղեկացրել էր, որ «2027 թվականից պետական ֆինանսավորում և աջակցություն կտրամադրվի միայն խոշորացված բուհերին և դրանց հետ միավորված գիտական կազմակերպություններին»:

Ինչպե՞ս են վերաբերվում այս ամենին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում և ի՞նչ կոնկրետ առաջարկություններով և դիտողություններով են պատրաստվում հանդես գալ մինչև փետրվարի 15-ը: Այս հարցերի շուրջ NEWS.am Tech-ը գրուցել է ՀՀ ԳԱԱ ակադեմիական քաղաքի մասին հետ:

## Բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների միավորում, թե՞ ինքնագրում.

# Ի՞նչ է առաջարկում Ակադեմիան



**- Պարոն Իշխանյան, կառավարությունը գիտական կազմակերպություններին և բուհերին առաջարկել է մինչև փետրվարի 15-ը ներկայացնել հայեցակարգային առաջարկություններ բուհերի խոշորացման և գիտահետազոտական կազմակերպությունների հետ միավորման վերաբերյալ: Քննարկվո՞ւմ են այս հարցերը ակադեմիական համակարգում:**

- Անշուշտ, ակադեմիայում՝ և՛ ինստիտուտներում, և՛ նախագահությունում ընթացում են քննարկումներ, և շուտով կլինեն ինստիտուտների՝ ձևակերպված տեսակետները, որոնց հիման վրա արդեն ակադեմիան կներկայացնի ընդհանրական տեսակետը:

Ներկա պահին ես կարող եմ ներկայացնել նախնական տպավորություններս: Կարելի է առանձնացնել դիտարկումների երեք փաթեթ:

**Առաջին.** Ակադեմիական համակարգում, բնականաբար, հասկանում են, որ երկրի ընդհանուր զարգացման ռազմավարության տեսակետից անհրաժեշտ է բուհ - գիտահետազոտական կազմակերպություններ համագործակցության մակարդակի եական բարձրացում: Դա անհրաժեշտ է և՛ բուհական համակարգի, և՛ հետազոտական ինստիտուտների ուժեղացման նպատակով և՛ երիտասարդ կադրերի ներհույսի նպատակով: Ըստ այդմ, ակադեմիական ինստիտուտներն ունեն որոշակի պատկերացումներ բուհ-գիտահետազոտական ինստիտուտ ինտեգրման վերաբերյալ, որոնք և շուտով կներկայացվեն:

**Երկրորդ.** Շատ կարևոր դիտարկում է այն, որ որևէ երկրում չկա գիտության կազմակերպման միասնական մեկ իրավակազմակերպական ձև, և դա ունի փիլիսոփայական նշանակություն, որովհետև գիտությունը չի կարող լինել միայն կրթությանն սպա-

սարկող, գիտությունը պետք է ծառայի նաև անվտանգության և պաշտպանական խնդիրներին, որոնք մեր պարագայում ընդհանրապես գոյաբանական են: Դեռևս արդեն մասնատիպ կառույցները ողջ աշխարհում գտնվում են բուհական համակարգերից դուրս, ինչպես օրինակ՝ ամերիկյան ազգային լաբորատորիաները (Lsu Ալամոս, Lոուրենս Լիվերմոր և այլն): Դրանք պետք է ապահովեն գաղտնիության համապատասխան մակարդակ և բավարարեն այլ հատուկ պահանջների: Այսինքն՝ պետք է ունենալ գիտական հիմնարկների իրավակազմակերպական ձևերի բազմազանություն: Բացի վերը նշվածից, տարբեր իրավակազմակերպական ձևեր ունեցող գիտական կազմակերպությունների միջև կարող է ձևավորվել առողջ մրցակցություն, ինչը ևս դրական գործոն է:

Պետք է նաև մոռանալ, որ պատմական ավանդույթները և շատ կարևոր են: Հայաստանում գիտության զարգացման վերաբերյալ եվրամիության՝ 2019 թվականի գեկույցում ևս նշվում է, որ ավանդույթների պահպանումը կարևոր է: Այսինքն՝ պետք է փորձել պահպանել նաև ինստիտուտների այն ավանդույթները, որոնցով նրանք արդեն ունեն ճանաչելիություն աշխարհում և այդ ճանաչելիությունը ձեռք են բերել տասնյակ տարիների աշխատանքի շնորհիվ: Դիցուք, Ալիխանյանի անվան ազգային լաբորատորիայի մասին գրելիս շատ հաճախ փակագծերում նշվում է երևանի ֆիզիկայի ինստիտուտ, որովհետև այն ճանաչելիություն ունի այդ անվամբ, որը կարևոր հիմք է միջազգային համագործակցության ցանցերի ձևավորման ժամանակ:

**Երրորդ.** Մենք գիտակցում ենք, որ մեր ակադեմիան ստեղծվել է Խորհրդային Միությունում, որտեղ պետությունը որոշակի գործառնություններ իր վրա էր վերցրել, օրինակ՝ գիտության հանրայնացումը: Կային մեծաքանակ հանրամատչելի ամսագրեր, գիտական հաղորդումներ և այլն: Հիմա մենք այլ հասարակարգում ենք ապրում: Բայց գիտենք, որ աշխարհում կա այդ փորձը, որ դրանով զբաղվում են գիտությունների ակադեմիաները, և մեր ակադեմիան ևս դա կարող է ամել: Կամ, օրինակ՝ խորհրդային շրջանում կային ճյուղային ինստիտուտներ, որոնք զբաղվում էին կիրառական արդյունքի առևտրայնացմամբ, բայց այսօր դրանք չկան: Աշխարհում դա իրականացնում են կոմերցիոն կամ արդյունաբերական ընկերությունները, որոնք ցավոք ևս բացակայում են Հայաստանում: Իսկ քանի որ կիրառա-

կան մշակումների խիստ անհրաժեշտություն կա, ապա ցանկալի է, որ նման մի գործառնություն իր վրա վերցնի ակադեմիան: Եվ այդ համակարգը պետք է ստեղծվի, և կրկին մենք գալիս ենք դիվերսիֆիկացման անհրաժեշտությամբ: Օրինակ, եթե մենք կառույց ենք ստեղծում տեխնոլոգիական մշակումների համար, ուրեմն դրա իրավակազմակերպական ձևը պետք է այլ լինի, քանի որ մենք գործ ենք ունենալու գնումների մեխանիզմի և այլ մոտեցումների հետ, և դա համադրելի չէ բուհական համակարգի հետ:

**- Բուհերի և ինստիտուտների փոխգործակցության վերաբերյալ ինչպիսի՞ մոտեցումներ կան ակադեմիական համակարգում:**

- Ընդհանրացնելով տարբեր ինստի-

տուտների մոտեցումները՝ կարելի է առանձնացնել բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների ինտեգրման մի քանի առաջարկներ:

**Առաջին.** Համատեղ գիտական լաբորատորիաների ստեղծում՝ որոշակի երկարաժամկետ մշակումների համար: Դրանք պետք է հազեցնեն լինեն համապատասխան սարքավորումներով ու պետք է ունենան բազային ֆինանսավորում, որովհետև իրականացնելու են երկարաժամկետ ծրագրեր:

**Երկրորդ.** Համատեղ դրամաշնորհային հետազոտական ծրագրերի իրականացում ինչպես հայաստանյան դրամաշնորհներով, այնպես էլ միջազգային: Ընդ որում դրանք կարող են լինել ցանցային տիպի, կարող են ներգրավել մի շարք տարբեր բուհեր և ինստիտուտներ: Դրանք համեմատաբար կարճաժամկետ ծրագրեր են: Նմանատիպ փորձը աշխարհում շատ տարածված է: Մասնավորապես Միջազգային գիտատեխնիկական կենտրոնը (The International Science and Technology Center, ISTC) դրամաշնորհային ծրագրերում ներգրավված են լինում տարբեր ինստիտուտների և բուհերի գիտական խմբեր: Այսինքն՝ հստակ կա անհրաժեշտություն, որպեսզի մեր Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն ևս հայտարարի նպատակային դրամաշնորհային ծրագրերի մրցույթներ՝ բուհ-գիտահետազոտական ինստիտուտ ձևաչափով: Բնականաբար այս ծրագրերում պետք է ընդգրկվեն երիտասարդ գիտաշխատողներ և ուսանողներ, դա կբերի փորձի փոխանակման և ավելի սերտ ինտեգրման:

**Երրորդ.** Համատեղ կրթական ծրագրերի մշակում և իրականացում: Գիտենք, որ մեր համալսարաններում առկա են հնացած դասընթացներ: Քանի որ գիտության առաջնային գծի հետազոտություններ այսօր առավելապես կատարում են գիտահետազոտական ինստիտուտներում, ապա գիտական կազմակերպությունները կարող են առաջարկել հատուկ բակալավորիատական, մագիստրոսական և ասպիրանտական ծրագրեր: Դրանք լուրջ գիտական թարմացում կբերեն բուհերին և կօգնեն լուծել ինստիտուտները կադրերով համալրելու հարցը: Ընդ որում մեկ գիտահետազոտական ինստիտուտը կարող է ունենալ այդպիսի ծրագրեր բազմաթիվ բուհերի հետ: Օրինակ, ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը կարող է ծրագրեր առաջարկել Պետական, Մանկավարժական, Պոլիտեխնիկական համալսարաններին և այլն: Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը կա-

րող է կուրսեր առաջարկել և՛ Բժշկական համալսարանին, և՛ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետին և այլն:

**Չորրորդ.** Գիտահետազոտական ինստիտուտներում համալսարանների բազային ամբիոնների ստեղծում: Սա պատմականորեն դրական փորձ ունեցող ձևաչափ է, որը կիրառվում է աշխարհի բազմաթիվ առաջատար բուհերում, մասնավորապես ամերիկյան Մասաչուսեթսի տեխնոլոգիական համալսարանում, Մոսկվայի ֆիզիկատեխնիկական և ինժեներաֆիզիկական ինստիտուտներում և այլն: Սեզ մոտ նման պրակտիկա կիրառվում է երևանի բժշկական համալսարանում, որը բազային ամբիոններ ունի տարբեր հիվանդանոցներում:

Կան նաև բուհերի և ինստիտուտների համագործակցության այլ մեխանիզմներ, օրինակ՝ համատեղ սեմինարների և գիտաժողովների անցկացումը և այլն:

**- Դուք առաջարկում եք ինտեգրման ծրագրեր, բայց պետությունը խոսում է բուհերի և ինստիտուտների միավորումից: Ի՞նչ կասեք սրա մասին:**

- Այդպիսի առաջարկներ ակադեմիայում ևս կան: Առաջարկվում է թեմատիկայով մոտ կամ մոլայնատիպ հետազոտություններ իրականացնող բուհերի և ակադեմիական գիտահետազոտական կառույցների միավորում: Բայց սա վերաբերում է այն դեպքերին, և դրանք թիվը շատ է, երբ համապատասխան բուհական ձևեր ակադեմիական կառույցը, կամ երկուսն էլ տկարացել են օբյեկտիվ պատճառներով: Նման դեպքերում, անշուշտ, կարիք կա ուղիղ խոշորացման:

Բայց մնացած դեպքերում այս ամենը կարելի է իրականացնել՝ պահպանելով ինստիտուտների և բուհերի ներկա իրավակազմակերպական ձևերը, նրանց ինքնուրույնությունը գիտական ուղղությունների ընտրության առումով և այլն:

**- Ըստ ակադեմիական քաղաքի հայեցակարգի՝ տարբեր բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների միավորմանը ստեղծվելու են տարբեր կլաստերներ: Ակադեմիայում ինչպե՞ս են պատկերացնում այդ կլաստերների ստեղծումը:**

- Ակադեմիական քաղաքի՝ մի քանի կլաստերներով գաղափարն ինքնին շատ լավ է, ու կարելի է առաջարկել օրինակ կենսաբանական բլոկի կլաստեր՝ ակադեմիայի բնական գիտությունների բաժանմունքի ինստիտուտների հիման վրա՝ տեղակայելով այն բուսաբանական այգու տարածքում: Նույնը կարելի է փորձել իրականացնել ֆիզիկամաթեմատիկական բաժանմունքի հենքի վրա, որը կտեղակայվի երևանի ֆիզիկայի ինստիտուտի տարածքում: Սա արդեն մի երրորդ չափողականություն է: Նմանատիպ ծրագրեր են մշակվում այսօր ակադեմիայում, և շուտով դրանք կներկայացվեն գիտական հանրությանը: Դա տարբեր ակադեմիական ինստիտուտների իրավակազմակերպական ձևերի պահպանմամբ տեխնոլոգիական կլաստերների ձևավորում է:

**- Այսինքն, հիմնականում Դուք առաջարկում եք ինստիտուտների և բուհերի ինտեգրում՝ իրենց իրավակազմակերպական ձևերի պահպանմամբ: Բայց չէ՞ որ կառավարությունը մտադիր է 2027 թվականից դադարեցնել այն ինստիտուտների ֆինանսավորումը, որոնք չեն միավորվի բուհերի հետ:**

- Մենք կարծում ենք, որ սա չնտածված կետ է: Սեզ անհրաժեշտ է բազմազանություն, և մենք հենց դա ենք առաջարկում: Առավել նպատակահարմար է, որ ի սկզբանե հայեցակարգում ամրագրվեն դիվերսիֆիկացված տարբերակները:

## ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ

գացման գործում ներդրած նշանակալի ավանդի համար ՀՀ նախագահի հրամանագրով պարգևատրվել են.

**ԱՆՈՒՆԱ Ծիրակացու մեդալով՝**  
Աշոտ Գարեգինի ՊԵՏՐՈՍՅԱՆԸ - ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի սցինսիյացիոն մյուսերի լաբորատորիայի վարիչ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Սուրեն Լևոնի ԽԱՌԱՏՅԱՆԸ - ԳԱԱ Ա. Բ. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտի «Պինդֆազային ռեակցիաների մակրոկինետիկայի» լաբորատորիայի վարիչ, ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

**Մովսես Խորենացու մեդալով՝**  
Լևոն Հմայակի ԱՐԲՈՒՄՅԱՆԸ - ԳԱԱ հնագիտության և ազգագրության

ինստիտուտի մշակութային մարդաբանության բաժնի վարիչ, ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների թեկնածու:

**Երախտագիտության մեդալով՝**  
Նարինե Արմենի ՍԱՐԿԱԶՅԱՆԸ - ԳԱԱ Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, կենսաբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր:



Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադրման 80-ամյակի կապակցությամբ, կրթության և գիտության զար-

# ՀՀ ԳԱԱ «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամը կմիավորի Հայաստանի և արտերկրի գիտնականներին՝ հակազդելու հակահայկական քարոզչությանը

Սույն թվականի նոյեմբերի 29-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ մամուլի ասուլիս՝ նվիրված «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամի ստեղծմանը:

Հիմնադրամի ստեղծման նպատակը, հիմնախնդիրները և նախատեսվող գործունեությունը ներկայացրին ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սարյանը և «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամի տնօրեն Ռոբերտ Ղազարյանը:

ՀՀ ԳԱԱ նախագահ, «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Աշոտ Սարյանը նշեց, որ հիմնադրամի ստեղծման հարցը ծագեց, երբ Ադրբեջանը պաշտոնական մակարդակով հայտարարեց այսպես կոչված «Արևմտյան Ադրբեջան» նախաձեռնության մասին՝ պատվիրելով իր ակադեմիական համակարգի երեք ինստիտուտներին գիտական նախադրյալներ ստեղծել՝ իբր Հայաստանը «Արևմտյան Ադրբեջան» է:

«Որոշվեց ստեղծել հատուկ կառույց, որը պետք է գիտականորեն հիմնավորված արձագանքի հակահայկական քարոզչությանը, մեր պետության տարածքային պատկանելության, պատմության, մշակույթի վերաբերյալ հայտարարություններին»,- ասաց Աշոտ Սարյանը:

ՀՀ ԳԱԱ նախագահը նշեց, որ հակահայկական քարոզչությանը հակազդելու աշխատանքներ ՀՀ ԳԱԱ համակարգի ինստիտուտներում մշտապես կատարվել են, և այսօր պետք է ակտիվացնել այդ գործունեությունը՝ հիմքում ունենալով գիտական փաստեր և վերլուծություններ:

«Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամի տնօրեն Ռոբերտ Ղազարյանը թվեց հիմնադրամի նպատակները: «Հիմնական նպատակն է ստեղծել և զարգացնել մեր գիտահետազոտական հարթակ, բարձրացնել Հայաստանի գիտական կազմակերպություններում իրականացվող հետազոտությունների արդյունավետությունը, խթանել գիտավերլուծական աշխատանքները գիտական կազմակերպություններում և բուհերում, միավորող հարթակ հանդիսանալ հայա-



գիտության և հասարակական գիտությունների ոլորտում գիտահետազոտական և գիտավերլուծական աշխատանքներ իրականացնող մասնագետների համար»,- ասաց Ռոբերտ Ղազարյանը:

Հիմնադրամի նպատակներն են.

○ իրականացնել հայագիտության և հասարակական գիտությունների ոլորտում հասարակության և պետության համար անկախ ու վստահելի փորձագիտական հետազոտություններ և հանրահռչակել դրանց արդյունքները,

○ նպատակն ունենալ հայագիտության ոլորտում հետազոտությունների առաջնացիլ զարգացմանը,


○ բարձրացնել հայագիտական և հասարակագիտական հետազոտությունների արդյունքների թվայնացման և հանրայնացման մակարդակը,

○ իրականացնել պետական կառավարման մարմինների գործունեության համար անհրաժեշտ գիտավերլուծական փորձաքննություն,

○ իրականացնել պատմական, քաղաքական, տնտեսական, բնապահպանական և այլ թեմաներով հետազոտություններ և ուսումնասիրություններ,

○ իրականացնել միջազգային երկկողմ և տարածաշրջանային հետազոտական ծրագրեր,

## ՄՏ-ԲԵՐԻ ՀԱՐԹ-ԱԿ



ցով ոչնչացվեց: Բնակչությունն ունեզրկվեց, սկիզբ առավ ազգային հիասթափությունը, որին հաջորդեցին ու շարունակվում են կործանարար արտագաղթը և ազգային ինքնագիտակցության արժեզրկումը: Ի՞նչ է հայրենիքը, ի՞նչ է ազգային արժեքը: Քանի Արցախը կար՝ որպես արդարացում, ամեն ինչ մի կերպ հանդուրժելի էր դառնում: Բայց այս մտայնության պայմաններում Արցախը չէր կարող պահպանվել: Արցախի դատարկումից հետո շատ ավելի ցավազին զգացվեց, որ նստած ենք չոր գետնին, և մեր դիմաց կոտորած տաշտակն է:

Տնտեսական, ռազմաքաղաքական ծանր հարվածներին զուգահեռ մեր ուժերը փորձեցին, ըստ համաշխարհայնացման պահանջների, վերափոխել մշակույ-

որովհետև չունի գիտության ներդրման համար անհրաժեշտ տնտեսական բնագավառ: Այս մտայնությամբ Գիտությունների ակադեմիան փակելու առաջարկություններ եղան: Հիմա էլ խոսում են գիտական հիմնարկներն ու բարձրագույն ուսումնական հաստատությունները ակադեմիական քաղաքում կենտրոնացնելու մասին, որը կլինի այդ բնագավառներին հասցված վերջին անուղղելի ծանր հարվածը:

Իսկ այս ամենն էլ վերջնական նպատակ ունի ոչնչացնելու գիտահրատարակչական գործը, ըստ որի՝ ազգային լեզվով լույս տեսնող ամեն մի ամսագիր չէ, որ համապատասխանում է գիտության հանրահռչակման արևմտյան գործող պահանջներին: Եվ եթե մույն հոդվածը անգ-

մտածեն ու տարբեր ձևերով գործեն մեր հարևանները...

Գիտությունն ունի իշխող իրավունքներ և իր հնարավորություններով ձգտում է համաշխարհային գերազդեցության, որ մշակում է ազգային գիտությունների վերահսկողություն և զարգացում կամ, այլ կերպ, դրանց դեմ ու մշակություն անկում: Դրանից հետո տվյալ երկիրը հայրենիքից վերածվում է տարածության և շուկայի, որ մշակում է՝ մենք չունենք փոխարեն և՛ կմտածենք, և՛ կարտադրենք, դու միայն սպառիր... Մինչդեռ, ինչպես ժողովուրդների դեմոկրատական իրավունքներն են ենթադրում, աշխարհը գեղեցիկ է լեզուների, մշակույթների, ինչպես նաև գիտության իր բազմազգ հարստությամբ...

Աշխարհի առաջընթացը պայմանավորված է գիտությամբ: Քենթրիջի և Օքսֆորդի համալսարանները ժամանակին պատրաստեցին գիտությամբ կրթված ու սնված սերունդներ: Այդ սերունդները գիտությունը դարձրին գեներ և շարժեցին իսպանական անպարտելի արմատա: Դրանից հետո աշխարհում տարածվեց անգլերենը, ստեղծվեց ԱՄՆ-ը, և աշխարհն անցավ նրանց վերահսկողության ներքո: Հիմա աշխարհի այս տերերը համաշխարհայնացման ծրագիրն են իրականացնում, որն սկսվում է գունավոր հեղափոխություններով, այդ երկրների թուլացմամբ՝ Իրաք, Լիբիա..., և լծում համաշխարհայնացման կառքին, որ մշակում է՝ մինչև հիմա սխալ եք ապրել, այսուհետև կլսեք մեզ և կանցկացնեք գեյ հանդեսներ և Հուլանք ու զանգի (Երևան, 2019), Մերկերի երեկոյի (Մոսկվա, 2023) պես շքահանդեսներ:

Անկախությունից հետո առ այսօր՝ արդեն 35 տարի, մենք չենք կարողանում ստեղծել մեր ամուր, մրցունակ պետականությունը: Իսկ ժամանակը չի սպասում: Այս հարցում ևս մեզ անհրաժեշտ է գիտական լուրջ մոտեցում, որի իրականացումները կլինեն հաջող սերունդները: Ուրեմն՝ դեպի գիտություն, որ ինքնուրույնության գրավակամն է, եթե, իհարկե, մենք ուզում ենք և կարող ենք ազգովի ոտքի կանգնել և պահպանել ու պաշտպանել անկախության կարգախոսները...

## ԸՆԴԴԵՄ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԱՂՈՒԹԱՑՄԱՆ

Գլոբալիզացիան, որ նույն համաշխարհայնացումն է կամ խոշորացումը, կյանքի բոլոր բնագավառներում իր պահանջներն է թելադրում: Ամեն ինչ սկսվում է ռազմաքաղաքական պահանջներից և աստիճանաբար ներառում տնտեսությունը, կրթությունը, մշակույթը, գիտությունը, անգամ նորաձևությունն ու կենցաղը: Խոշորացման պահանջներին առավելապես ենթարկվում են մոլորակախ այն երկրները, որոնք սկզբից ևեթ կորցնում են ինքնուրույն զարգացման հեռանկարը և կախվածության մեջ հայտնվում համաշխարհային բազմա-տեսակ կազմում կառույցներից: Ռազմաքաղաքական կախվածությունը ենթարկվում է դրամական կախվածության, որից հետո ամեն ինչ թելադրվում է: Ստեղծվում են տեղական ենթակա տարատեսակ կառույցներ, որոնք էլ իրականացնում են խոշորացման պահանջները: Այդ կառույցների թիվը վերջին տվյալներով Հայաստանում հասնում է 2500-ի:

Հիմա արդեն ոչ ոք չի էլ ուզում հիշել, որ անկախության հռչակման առաջին իսկ օրերից ՀՀ-ում գործունեությունը դարձրեցին բազմաթիվ գործարաններ, տարատեսակ ձեռնարկություններ ու ֆաբրիկաներ, որոնց թիվը մասնաճյուղերի հետ մեկտեղ հասնում էր մոտ 1500-ի: Ժողովրդական այն հարստությունը, որ դժվարությամբ ստեղծվել, կուտակվել էր յոթ տասնամյակների ընթացքում, կորցրեց իր մշակակությունը և սեփականաշնորհման միջո-

թը, կրթությունը և գիտությունը: Մշակույթն աստիճանաբար հասավ ամենացածր ռաբիսի աստիճանի, որը իբր թե զվարճալի է ու զբաղեցնող, բայց իրականում վանող է, ոգեսպան: Հապա հետևե՛ք հեռուստահաղորդումների բովանդակությանն ու որակին: Իսկ գրագիտությունը... թող ու փախի: Հայոց լեզուն և պարզ գրագիտությունը երբեք այսքան տորոված չեն եղել: Ուրեմն՝ համառ են գլոբալիստները, ըստ որոնց՝ դեռ գալու է մտավոր դեգեներատի ժամանակը:

Կրթական համակարգը, ըստ Բոլոնիայի պայմանագրի պահանջների, ևս ձևախելվեց: 12-ամյա կրթությունն իրեն չի արդարացնում: Ավագ դպրոցի վերջին դասարաններում աշակերտները դասի չեն նստում, զբաղված են մասնավոր պարապմունքներով: Իրեն չի արդարացնում նաև բարձրագույն կրթության 4 տարի + 2 տարի ուսուցման համակարգը: Այս ճանապարհին կյանք մտնող երիտասարդը կորցնում է 3 տարի՝ երկուսը դպրոցում, մեկը՝ բուհում: Ժողովրդավարությունից ենք խոսում, մինչդեռ ավագ դպրոցի վերջին դասարանի աշակերտի մի ոտըք եթե դեռ դպրոցում է, մյուս ոտըք արդեն զինկոմիսարիատում է:

Խորհրդային տարիներին Հայաստանը գիտության երկիր էր, առաջնակարգ տեղ էր գրավում Ռուսաստանից և Ուկրաինայից հետո: Իսկ հիմա ասում են՝ Հայաստանը գիտությունահեռ հանրապետություն է,

լերեն տպագրես իրենց առաջարկած բազմաթիվ ամսագրերից որևէ մեկում, ըստ իրենց, ավելի գիտական մշակակություն կունենա, քան եթե տպագրվի ազգային լեզվով լույս տեսնող թեկուզ և ամենագիտական ու պահանջված ամսագրում: Իմ էլ փոստն ամեն օր հեղեղվում է եվրոպական գրեթե բոլոր երկրների գիտական ամսագրերից եկող հրավերներով... Գայթակղիչ է, և ինչպես ամեն մի գայթակղիչ բան թեև ծախսատար ու ժամանակատար, բայց վերջին հաշվով այլ բան չէ, քան գիտության շուկա...

Այո, գիտության զարգացումը համաշխարհային բնույթ է կրում, որն առավել վերաբերում է բնական և մաթեմատիկական գիտություններին, իսկ հումանիտար գիտություններն ունեն խորապես ազգային պատկանելություն ու գիտական միջավայր: Փոխել այդ գիտաճյուղերի լեզուն անգլերենի՝ առաջին հերթին մշակակում է հարվածել ազգային լեզուներին, որոնց զարգացումը պայմանավորված է նաև այդ բնագավառներին համապատասխան լեզվամտածողության ու բառապաշարի զարգացումով: Իսկ այդ բառապաշարն ստեղծվում է բառապատճենումներով, թարգմանություններով, փոխառություններով, ինչն ազգային գիտության զարգացման նախահիմքն է: Եվ ո՞վ ասաց, որ հայ գիտությունը մորից չի փայլատակելու աստղագիտությամբ, արագացուցիչով, եթե, իհարկե, մենք ցանկանանք, և ոչ թե մեր փոխարեն

**Ղազարյան ԳԱՄՊՐՈՅԱՆ**  
*Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ*

ԸՇ ԳԱՍ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ



ՎԵՀԱՐԻ ՍԱՔԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱՍ արտասահմանյան անդամ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վեհարի Սաքանյանը ծնվել է 1950 թ. հոկտեմբերի 28-ին ՀԽՍՀ Ստեփանավան քաղաքում:

1967-1974 թթ. սովորել է Մոսկվայի Պիրոգովի համալսարանի երկրորդ բժշկական ինստիտուտում, որն ավարտելուց հետո Վ. Սաքանյանն ընդունվում է Մոսկվայի արդյունաբերական մանրէների գենետիկայի և սելեկցիայի ինստիտուտի ասպիրանտուրա (մոլեկուլային գենետիկայի լաբորատորիա) ուսանելով անվանի գիտնական Սոս Ալիխանյանի մոտ, որը, ի դեպ, այդ ինստիտուտի տնօրենն էր: 1978 թ. պաշտպանում է իր գիտական ատենախոսությունը՝ «RP4 կայունության գործոնի գենետիկական ուսումնասիրությունը» թեմայով: 1979 թվականից աշխատանքի է անցնում Մոսկվայի արդյունաբերական մանրէների գենետիկայի և սելեկցիայի ինստիտուտում՝ որպես գիտաշխատող:

1979-1980 թթ., մասնագիտական որակավորումը բարձրացնելու նպատակով, Ալիխանյանի առաջարկով Վեհարի Սաքանյանը մեկնում է Հունգարիա՝ UNESCO-ի միջազգային կենսաբանական կենտրոն՝ «Rhizobium melilot-ի ագոտի ֆիքսումը կողմնորոգ գեների կլոնավորումը և ուսումնասիրությունները» թեմայի շրջանակում հետազոտություն իրականացնելու նպատակով: 11 ամիս իրականացրած հետազոտության շրջանակում նրա ուսումնասիրությունը ճանաչվում է լավագույնը:

1982 թ. Երևանի ամիսաթղթերի գիտահետազոտական տեխնոլոգիական ինստիտուտի տնօրեն Էդուարդ Հակոբյանի խնդրանքով և Սոս Ալիխանյանի առաջարկությամբ Վեհարի Սաքանյանը տեղափոխվում է Երևան և Կենսատեխնոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտում հիմնում գենային ինժեներիայի լաբորատորիա, որը ԽՍՀՄ տարածքում առաջինն էր, որ ձեռնամուխ եղավ ստանալու մի շարք ամիսաթղթերի և ֆերմենտների բարձրակտիվ շտամ-արտադրիչներ, որոնք մինչ այժմ էլ մրցունակ են միջազգային շուկայում: Փաստացի նրա ղեկավարած խումբը նոր ուղղություն էր բացում կենսատեխնոլոգիայի բնագավառում: Ըստ էության այդ լաբորատորիան առաջինն էր ԽՍՀՄ-ում, որը միկրոօրգանիզմի պլազմիդ կարողացավ օգտագործել որպես վեկտոր: Դրա շնորհիվ հնարավոր էր ակտիվացնել միկրոօրգանիզմների կոնկրետ գեները՝ պրոդուկտի արտադրության համար:

1987 թ. Վ. Սաքանյանը Մոսկվայի արդյունաբերական մանրէների գենետիկայի և սելեկցիայի ինստիտուտում պաշտպանեց դոկտորական ատենախոսությունը՝ «Մանրէներում հետերոլոգ գեների էքսպանսիայի ուսումնասիրությունները» թեմայով:

Միջազգային գիտական հանրություն-

ըն հավուր պատշաճի գնահատեց նրա իրականացրած հետազոտությունները: 1986 թվականից նա համագործակցում էր բելգիացի գիտնական Նիկոլայ Գլադորֆի հետ, ով ևս զբաղվում էր արգինինի ամինաթթվի ուսումնասիրությամբ: Դրանից հետո Վ. Սաքանյանին երեք անգամ հրավիրեցին Բելգիա՝ առաջատար գիտահետազոտական ինստիտուտում աշխատելու երեք ամսով: Դրանց հետևեցին նոր հրավերներ ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Բելգիայից:

1992 թ. Վեհարի Սաքանյանը մեկնեց Ֆրանսիա՝ Նանտի համալսարան, որտեղ հիմնեց կենսատեխնոլոգիաների լաբորատորիա: Այս ընթացքում Վ. Սաքանյանն աշխատել է Նանտի համալսարանում և 5 տարում ստացել բարձրագույն

պրոֆեսորի աստիճան: Վեհարի Սաքանյանը 130 գիտական հոդվածի, մենագրություններում գլուխների, մի շարք արտոնագրերի հեղինակ է:

Վ. Սաքանյանի արտոնագրերից մեկը 2000 թ. գնեց ճապոնական «Աջեոնոտոր» ընկերությունը, որը թերևս առաջինն էր ամիսաթղթերի կենսատեխնոլոգիական արտադրության բնագավառում: Դրանից հետո արգինինի համար մեծ շուկա բացվեց: Այն օգտագործվում է դեղագործության, կոսմետիկայի և այլ բնագավառներում: Այդ արտոնագրի վաճառքից գոյացած գումարի մի մասը նա ուղղեց ՀՀ-ում համապատասխան ոլորտի զարգացմանը:

Հաշվի առնելով Վ. Սաքանյանի գիտամակալարժեքային գործունեությունը, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և ԵՊՀ ոլորտային ֆակուլտետների հետ սերտ համագործակցությունը՝ 2008 թ. նա ընտրվեց ՀՀ ԳԱՍ արտասահմանյան անդամ:

Անվանի գիտնականն այսօր էլ սերտորեն համագործակցում է ՀՀ ԳԱՍ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի և Ա. Մնջոյանի անվան նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի հետ:

Պրոֆեսոր Սաքանյանը ղեկավարել է 18 ասպիրանտի աշխատանք, որոնց մի մասը պաշտպանել են Ֆրանսիայում և վերադարձել հայրենիք՝ ներդնելով իրենց գիտելիքները հայրենի գիտության զարգացման մեջ: Նրա հրավերով իր ասպիրանտներից երկուսն աշխատել են նաև Նանտի համալսարանի կենսատեխնոլոգիայի լաբորատորիայում, որտեղ նաև վերապատրաստում են անցել ՀՀ մի շարք ոլորտային գիտնականներ:

Վ. Սաքանյանն արդեն երեք տարի է՝ Նանտի համալսարանի պատվավոր պրոֆեսոր է և շարունակում է իր գիտական հետազոտությունները: Գիտական կյանքից դուրս նա ևս մեծ ակտիվություն է ցուցաբերում՝ համագործակցելով Ֆրանսիայի հայ համայնքի հետ: Ընտանիքով անդամակցում են «Արարատ սար» կազմակերպությանը, որն իր հարկի տակ է ժողովել 200 ֆրանսահայի:

Այսօր էլ Վեհարի Սաքանյանը մեծ ջանքեր է ներդնում, որպեսզի ՀՀ-ն ստանա ոլորտային գիտական այն նորությունները, որոնք առկա են Եվրոպայում: Վեհարի Սաքանյանը Հայաստան կատարած իր անենամյա այցելությունների ժամանակ գրեթե միշտ հանդես է գալիս գիտական ելույթներով ոլորտային մասնագետների համար, նրանց հետ իրականացնում է համատեղ ուսումնասիրություններ և բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում տպագրում գիտական հոդվածներ:

**Գոհար ԻՍՎԱՆԴԱՐՅԱՆ**  
**Պ.գ.թ., դոցենտ, ՀՀ ԳԱՍ Սփյուռքի հետ համագործակցային ծրագրերի պատասխանատու**

ՄՏԱՎՈՐԱԿԱՆ ԿՆՈՋ ՄԵՐՕՐՅԱ ՏԱԳՆԱԴՈՒՆԵՐԸ

Լիլիթ Արզումանյանը շատ հետաքրքիր գրքեր է գրում. դրանք սրամիտ են, ունեն ասելիք, համարձակ են և օգտակար: Նա մշտապես պահպանում է իր սկզբունքայնությունը աշխատանքում, բանավոր ու գրավոր խոսքում:

Հիանալի գրականագետ, թատրոնի գիտակ, կազմակերպչական ունակություններ ունեցող կին, հայրենասեր հայուհի, սիրասուն մայր և տատիկ, ծնողասեր աղջիկ, հայ ընտանիքի լավագույն ավանդույթների կրող Լիլիթ Արզումանյանը հետադարձ հայացքով «Ծանոթ-անծանոթ էջեր» գրքում մեզ է մատուցում իր անցած կյանքի ինքնազնահատականը: Սա ինքնատիպ գիրք է, որ կարելի է կոչել նաև «Լիլիթ Արզումանյանը Լիլիթ Արզումանյանի մասին»:

Հետաքրքիր դիտարկումները բազում են այս գրքում: Օրինակ՝ մայրական պապը, որը տաղանդավոր նկարիչ էր, երբեք չէր խոսում իր ծնողների ու անցյալի մասին: Ցեղասպանությունը վերապրածներին բնորոշ մի հատկանիշ:

Հայրական կողմից Լիլիթը Արցախից է. նա ՀՀ ԳԱՍ թղթակից անդամ, վաստակաշատ գիտնական Սևակ Արզումանյանի դուստրն է:

«Ծանոթ-անծանոթ էջեր» գրքում հակադրված են խորհրդային ու ներկա դարից, հին օրերի հոգևոր հարուստ և մեր օրերի առավել նյութական դարձած կյանքը: Մեզանում վերացել է հոգևորը հարստացնող գրքերի ընթերցանությունը, ամեն ինչ ձգտում է հեշտին, նյութականին: Նա դառնացած գրում է. «Հավանաբար այսպիսին դարձրեց մեր անկախության տարիներին, երբ ոտնակոխ արեցին կրթությունը, արհամարհեցին, տրորեցին մեր լեզուն, երկիրը դարձրինք լատինատառ, հեռուստացույցը ողողեցինք անմակարդակ սերիալներով» (էջ 120):

Շատ նուրբ դիտողականությամբ են պատկերված մի շարք երիտասարդների ճակատագրեր, որոնք ուսանողական տարիներից ընկերություն են արել, և այդ հարազատական կապը չի կտրվել տարիների ընթացքում:

Ծճարիտ ու անխարդախ պատկերներ կան՝ կապված այսօրվա թատերական կյանքի հետ: 6-7 տարի Լիլիթ Արզումանյանը «Արմենակոթ» հեռուստալիքով վարել է «Մեր թատրոնը» հաղորդաշարը, որի ընթացքում անմոռանալի ձևով հայ մարդուն ճշմարիտ արվեստով կրթելու համար ներկայացվել են մեր թատրոնի երևելիները՝ Խորեն Աբրահամյանը, Սոս Սարգսյանը, Երվանդ Ղազանչյանը, Վարդուհի Վարդերեսյանը, Վիոլետա Գևորգյանը, Վլադիմիր Մսրյանը, Ազատ Գասպարյանը և ուրիշներ: Ուշագրավ է Խորեն Աբրահամյանի՝ մահից երկու օր առաջ Լիլիթին ասված խոսքը. «Վերջիվերջո այս գրույցը կընդհատվի, իմ պարագայում կընդհատվի... բայց մի բան չպետք է ընդհատվի՝ մեր տեսակը, որը պետք է աշխարհին, որ մեր տեսակը չլինի, շատ բան կպակասի էս մեծ աշխարհում...» (էջ 88):

Լիլիթը նաև վավերագրական ֆիլմ է նկարել Հայաստանի գրողների միության արտագնա հավաքի մասին Բեյրութում, որն իրականացավ Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա-ի բացառիկ հյուրընկալության շնորհիվ, նաև ֆիլմեր Արևմտյան Հայաստանի մասին: Գեղեցիկ է նկարագրված Արամ Ա-ի՝ հայ գրողների հետ հանդիպման տեսարանը. «Մեկ ժամից Մայրավանդում մեզ ողջունելու էր Արամ կաթողիկոսը: Նա դափնե մտավ արքայավայել. ինչ փառահեղ անհատականություն էր... իսկ երբ սկսեց խոսել, ինձ թվաց՝ Վարդան Մամիկոնյանն է կռվից առաջ խոսում գրքի հետ» (էջ 102): Հուզիչ է Լիլիթի՝ Անի մայրաքաղաքից ստացած



դիպուկ տպավորությունը. «Անիի հզոր դարպասները ցնցող էին, իսկ ներսի դատարկությունը ահավոր էր: Քամին շնկշնկում էր, ասես օրոր էր ասում, ու անմարդաբնակ ու անկյանք տարածքը քամու երգն էր լսում» (էջ 96):

Լիլիթը յուրօրինակ ձևով ընդգծում է անկախ Հայաստանի օրհներգի դեմ. ինչո՞ւ հրաժարվեցինք ողջ աշխարհի կողմից հանձարեղ համարված Արամ Խաչատրյանի երաժշտությունից. «Ի դեպ, այնպես ստացվեց, որ անկախության տարիներին ժողովուրդը դարձավ թշվառ ու անտեր, իսկ նրանք, ովքեր մեզ այդպիսին սարքեցին, հիմնավոր մոռացան, որ «պիտ մեռնեն» (էջ 53):

Գրքում կա մի կարևոր նկատառում կնոջ ու տղամարդու այն փոխհարաբերության մասին, որը Հայաստանում չեն հասկանում անգամ բարձրաստիճան համարվող մտավորականները՝ կարծելով, թե այդ ընկերությունը չի կարող հոգևոր սահմաններում լինել:

Լիլիթը քաջատեղյակ է արցախյան գոյամարտի բոլոր դրվագներին. նրա երջանակահիշատակ եղբայրը՝ հայտնի հեռուստալուսավոր Արտակը, այդ ընդգծման մասնակիցն ու վավերագրողն է եղել: «Արցախյան հաղթանակը մեր հարստությունն էր, այս աշխարհում ապրելու իրավունքն ու արժանապատվությունը, մեր նորօրյա ոգին էր, նաև դարավոր պատմությունից մեր դասն ու վրեժը...» (էջ 58):

«Ծանոթ-անծանոթ էջեր» գրքում բարձրացված է նաև անկախության տարիներին առաջացած հասարակական խավերի նոր շերտավորումը՝ գերթանկարծեց մեքենաներ, շքեղագույն դրոշակներ, անօրեն պահվածք, անտրամաբանական քանակով երևան քաղաքում կառուցվող բարձրահարկ շինություններ: Դրա կողքին քանդվող ու դատարկվող գյուղեր, հացի խնդիրը լուծելու համար բաժան-բաժան եղած ընտանիքներ:

Լիլիթ Արզումանյանի գրքի քննադատական հատվածներն անամոռանական են: Դրանք բխում են առ Հայաստան ունեցած սիրուց, սեփական պետականությունը չկորցնելու տագնապից:

Եթե Պատմահայր Մովսես Խորենացին «Հայոց պատմության» վերջաբան «Ողբում» գրում է, թե բոլորից վերացել են սերն ու ամոթը, պապ ծայնակցելով մեր ազգապահպան մասնուն՝ Լիլիթ Արզումանյանը գրում է. «Ու տարեցտարի իմ հայրենիքում ամոթը հիմնավոր փակվեց պահուցում, իսկ բանալին կորավ...» (էջ 100):

Լիլիթ Արզումանյանի այս եզրահանգումը հայրենիքի ապագայի համար սթափության կոչ է անկախ Հայաստանի բոլոր ղեկավարներին:

**Աելիտա ԴՈՒՆԻՍՅԱՆ**  
**ՀՀ ԳԱՍ թղթակից անդամ**

# ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

(Ծննդյան 70-ամյակի առթիվ)



«Պատմաբանասիրական հանդես»-ի գլխավոր խմբագիր, բանասիրական գիտությունների դոկտոր Անուշավան Զաքարյանը 70 տարեկան է:

Լայն և ընդգրկուն է անվանի գրականագետի կենսագրությունն ու լրորտը. խմբագրական-հրատարակչական աշխատանք, պետական ծառայություն, գիտահետազոտական ու մանկավարժական գործունեություն: Աշխատանքային կենսագրությունը սկսել է 1977 թ., երբ ընդունվել է ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն՝ որպես խմբագիր: 1980–1993 թթ. եղել է ակադեմիայի «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի պատասխանատու քարտուղարը:

1993 թ. հոկտեմբերից Ա. Զաքարյանն աշխատանքի է փոխադրվել ՀՀ Գերագույն խորհրդի աշխատակազմ. եղել է հրատարակչական բաժնի վարիչ, Ազգային ժողովի գրասենյակի ղեկավար, քարտուղարության պետի տեղակալ: 1998 թ. նշանակվել է ՀՀ կառավարության աշխատակազմի նորաստեղծ «Հայաստանի Հանրապետության

պաշտոնական տեղեկագիր» ՊՓԲԸ-ի գործադիր տնօրեն: 2000-2019 թթ. աշխատել է Ազգային ժողովի հրատարակչական բաժնի վարիչ, գլխավոր հրատարակիչ:

Գիտությունների ազգային ակադեմիայի հետ Ա. Զաքարյանի կապերն այս ընթացքում չեն ընդհատվել. 1999 թ. նաստանձնել է «Պատմաբանասիրական հանդես»-ի պատասխանատու քարտուղարի, 2003-ից՝ նաև գլխավոր խմբագրի տեղակալի պաշտոնը: 2018 թ. հունիսից Ա. Զաքարյանը միջազգային համբավ ունեցող հայագիտական այս պարբերականի գլխավոր խմբագիրն է:

2022 թ. փետրվարից Ա. Զաքարյանը համատեղությամբ աշխատում է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնում՝ որպես ավագ գիտաշխատող:

Ա. Զաքարյանի գիտական հետազոտություններն ամփոփված են 23 մենագրությունում ու կազմած ժողովածուներում և ավելի քան 250 հոդվածներում ու հրապարակումներում: Ի սկզբանե հետազոտության թեման է ընտրել ռուս-հայ պատմամշակութային կապերը: 1985 թ. պաշտպանել է թեկնածուականատենախոսություն՝ «Ռուս գրողները Անդրկովկասում և հայ գրական կյանքը» խորագրով, իսկ 2005 թ.՝ դոկտորականատենախոսություն՝ «Ռուս գրական գործիչները և հայ իրականությունը (XX դարի 10-ական թվականներ)» թեմայով: Գիտական շրջանառության մեջ դնելով պատկանելի քանակությամբ արխիվային նոր վավերագրեր ու մամուլի տվյալներ՝ նա մոռացության մշուշից հանել և ընթերցող լայն հանրությանն իր մենագրություններով (հայերեն և ռուսերեն) ծանոթացրել է XX դարի սկզբի ռուս գրական-հասարակական, ռազմա-

կան գործիչների մի աստղաբույլի՝ Տ. Օլգենիևի, Ա. Կուլեբյակինի, Ա. Կուպրինի, Կ. Բալմունտի, Ա. Գորոդեցկու, Վ. Բրյուսովի, Վ. Կամենսկու, Բ. Լազարևսկու, Ի. Էրենբուրգի, Օ. Մանդելշտամի և այլոց՝ Արևմտյան Հայաստանում ու Անդրկովկասում ծավալած հայանպաստ բուռն գործունեության մանրամասներին: Այս առումով Ա. Զաքարյանն իրավամբ համարվում է ռուս-հայ գրական, պատմամշակութային կապերի մեթոդա ճանաչված մասնագետներից մեկը:

Հետագա տարիներին Ա. Զաքարյանն ընդլայնել է իր գիտական հետաքրքրությունների ոլորտը, խորացել XX դարի սկզբի հայ իրականության տարբեր կողմերի ուսումնասիրության մեջ, զբաղվել մինչ այդ չհետազոտված հիմնահարցերի ուսումնասիրությամբ: Դրա առաջին արգասիքը եղավ այն, որ մեր հանրությունը ծանոթացավ Հովհ. Թումանյանի գլխավորած Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովրդի կրած վնասները քննող հանձնաժողովի գործունեությանը՝ «Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին» («Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» փաստաթղթերի և նյութերի ժողովածու») գրքով:

Ա. Զաքարյանը XX դարի սկզբի հայ մամուլի քաջատեղյակ հետազոտող է: Դրա խոսուն վկայություններից են նրա կազմած մի շարք արժեքավոր ժողովածուները:

Առանձին էջեր են հայագիտության բազում երախտավորների գործունեությանը վերաբերող արխիվային նյութերի՝ նամակագրություն, հուշագրություն, Ա. Զաքարյանի հրապարակումները, որոնք

ներածական խոսքով ու գիտական հմուտ ծանոթագրություններով նոր կողմերով են բացահայտում նրանց կյանքն ու գործունեությունը:

Վերջերս լույս տեսավ անվանի գրականագետի նոր մենագրությունը՝ նվիրված անցյալ դարի առաջին երեսնամյակի հայ իրականության երևելի դեմքերից մեկի՝ Դավիթ Անանուկի կյանքին ու գործունեությանը:

Ա. Զաքարյանը երկար տարիներ դասախոսական-մանկավարժական աշխատանք է կատարել Երևանի տարբեր բուհերում, գիտական խորհուրդների անդամ է, զեկուցումներով հանդես է եկել մի շարք գիտաժողովներում: 1986 թ. ԽՍՀՄ, ապա Հայաստանի Ժողովրդականության միության անդամ է, 2021 թ. Հունանիզմի պրոբլեմների ակադեմիայի իսկական անդամ է: Ա. Զաքարյանն ունի ՀՀ պետական ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան:

ԳԱԱ համակարգում ունեցած մեծ ավանդի համար Ա. Զաքարյանը 2013 թ. պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ «Վաստակագրով»:

Սկզբունքայնությամբ, լայնախոհությամբ, սեփական անձի և միջավայրի նկատմամբ պահանջկոտությամբ Ա. Զաքարյանն արժանի հարգանք ու հեղինակություն է վաստակել գիտական ամենալայն հանրության շրջաններում:

Շնորհավորելով մեր գործընկերոջ ծննդյան 70-ամյա հոբելյանը՝ նրան ցանկանում ենք քաջառողջություն և գիտահետազոտական նորանոր ձեռքբերումներ:

**Յուրի ՍՈՒՎՈՐՅԱՆ**  
**ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս**

**Վաչե ՀՈՎՎԱԿԻՅԱՆ**  
**ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության գլխավոր տնօրեն**

# ԿԱՐԵՎՈՐ ՆԵՐՊՐՈՒՄ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՓՅՈՒՌ-ՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄՊԱՐԵԶՈՒՄ

Մեծ Բրիտանիայի Cambridge Scholars Publishing հրատարակչությունը լույս է ընծայել ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի Երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Լիլիթ Երնջակյանի «The Musical World of Alan Hovhannes: East-West Crossroads» մենագրությունը՝ նվիրված 20-րդ դարի ամերիկահայ անվանի կոմպոզիտոր Ալան Հովհաննեսի երաժշտական ժառանգության ուսումնասիրությանը՝ Արևելք-Արևմուտք մշակութային փոխառնչությունների համատեքստում:

Հնարավորություն ունենալով աշխատել ամերիկյան համալսարանների գրադարաններում, ծանոթանալով Ալան Հովհաննեսի ստեղծագործությանն առնչվող տարաբնույթ հրապարակումներին, պարբերական մամուլի նյութերին և մեծաքանակ ստեղծագործություններին՝ Լ. Երնջակյանը բազմաթիվ հոդվածներ է գրել և 2015 թ. հրատարակել Ալան Հովհաննեսի նվիրված առաջին մենագրությունը (Լ. Երնջակյան, Ալան Հովհաննեսի երաժշտությունը Արևելք-Արևմուտք մշակութային խաչուղիներում, «Գիտություն» հրատ., 2015)՝ լուսաբանելով կոմպոզիտորի ստեղծագործություններում արևելյան՝ հնդկական, հայկական, կորեական, ծապոնական երաժշտության ավանդական ժանրերի մարմնավորման սկզբունքները:

Ալան Հովհաննեսի անընդգրկելի ստեղծագործական ժառանգության շարունակական հետազոտությունների ընթացքում է Լիլիթ Երնջակյանը բացա-

հայտել 20-րդ դարի մեկ այլ նշանավոր ամերիկահայի՝ բազմատաղանդ գրող և արվեստագետ Վիլյամ Սարոյանի հետ ունեցած նրա մտերմությունն ու նամակագրությունը և ձեռք բերել այդ մեծարժեք նամակագրությունն ու այլ տեղեկատվական նյութեր Կալիֆոռնիայի Ստեմֆորդ համալսարանի գրադարանի հատուկ հավաքածուների բաժնից, որտեղ պահվում է նաև Սարոյանի արխիվը: Այդ նյութերն առանձին բաժնով ընդգրկված են գրախոսվող մենագրության մեջ, որը Cambridge Scholars Publishing-ի կողմից հրատարակված հայ առաջին երաժշտագետի աշխատանքն է:

Տասնամյակներ շարունակված և մինչ օրս անտիպ Սարոյան-Հովհաննես նամակագրության ուսումնասիրությամբ, առանձին նամակներից քաղված մեջբերումներով Երնջակյանը գիտական շրջանառության մեջ է դրել հետաքրքիր և արժեքավոր նյութեր, որոնք, ինչպես նշում է նա, գրողի և կոմպոզիտորի հոգևոր-ստեղծագործական կապի վկայություններն են և պատկերացում են տալիս «երկու հայագի ամերիկացիների նուստալգիկ զգացումների, Տան և Հայրենիքի ընկալումների և ամենակարևորը, հայ երգն ու երաժշտությունը աշխարհին ներկայացնող նրանց ինքնատիպ մտահղացումների և անսպառ ծրագրերի մասին»:


Արխիվային նյութերի և մատչելի երաժշտական ձայնագրությունների քննությամբ Երնջակյանն ուրվագծել է Սարոյանի և Հովհաննեսի համագործակցությամբ ստեղծված բազմաթիվ

երգերի, մյուզիքլների, ռապսոդիաների, ֆիլմերի և երաժշտաբեմական ներկայացումների ընդգրկուն և տպավորիչ պատկերը:

Աշխատության կառուցվածքում առանձնահատուկ դրամատուրգիական նշանակություն ունեցող այս բաժնին հաջորդում են Ալան Հովհաննեսի հայկական և Արևելյան ստեղծագործություններին նվիրված չորրորդ և հինգերորդ գլուխները, որտեղ հեղինակը հանգամանալից վերլուծության է ենթարկում և գիտական հիմնավորումներով առանձնացնում առավել նշանակալից արևելյան թեմաներով գրված երկերը, մեկնաբանում համապատասխան ազգային ավանդույթների կերպարային-մեղեդային արտահայտչականության, ձայնավարքային և ելեկտրային առանձնահատկությունների կիրառության սկզբունքները:

Լիլիթ Երնջակյանի «The Musical World of Alan Hovhannes: East-West Crossroads» մենագրությունն իր մշակութաբանական ուղղվածությամբ, գիտաճանաչողական արժեքով, ազգային ինքնության խնդիրները միջազգային համատեքստում կարևորող հենկետերի մեկնաբանություններով արժեքավոր ներդրում է հայագիտության և սփյուռքագիտության ասպարեզում:

Երաժշտական արևելագիտության ոլորտում նշանակալի ներդրում ունեցող գիտնականի բեղմնավոր գործունեության արդյունքները համալրող այս անգլերեն գրքի ամուրանալի նվաճումներից են երկու մեծ ամերիկահայերի՝ Վիլյամ Սարոյանի և Ալան Հովհաննեսի նորա-



*The Musical World of*  
**Alan Hovhannes**  
East-West Crossroads  
Lilit Yernjakyan

րարական գաղափարներով հագեցած ստեղծագործության յուրովի հանրահռչակումը և նրանցով պայմանավորված, ընդհանրապես, հայ արվեստի ինքնատիպ ներկայության կարևորումը 20-րդ դարի Արևմուտքի մշակույթում: Եվ այս առումով հեղինակի առաքելությունն իրականացված է բարձր գիտական մակարդակով: Հարուստ և նորահայտ բովանդակային շերտերով, հետաքրքիր ձևավորումով կաշառող այս հրապարակումն անկասկած իր արձագանքները կունենա և նոր ազդակներ կհաղորդի համաշխարհային մշակույթում անցյալի հետք թողած հայ արվեստագետների գործի արժևորմանն ու ուսումնասիրությանը:

**Աննա ԱՍՍՐՅԱՆ**  
**ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն**

ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում



ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում առաջին անգամ ստացվել է «Էլեկտրամագնիսականորեն-հարուցված թափանցիկության» (էՅԹ) ռեզոնանս՝ օգտագործելով գերնեղ օպտիկական բջջում պարփակված ալկալիատոմների մագնիսականորեն-հարուցված անցումները:

Երկալիք լազերային դաշտերի ազդեցությամբ ատոմական գոլորշիներում տեղի ունեցող էՅԹ երևույթը հայտնաբերվել է դեռևս 30 տարի առաջ, և այսօր այն լայնորեն կիրառվում է այնպիսի խնդիրներում, ինչպիսիք են լույսի արագության դանդաղեցումը, օպտիկական ինֆորմացիայի գրանցումը և պահպանումը, մետրոլոգիան, զգայուն մագնիսաչափությունը: Այդ կիրառությունների հիմքում ատոմական անցումների վրա գերնեղ օպտիկական ռեզոնանսի ձևավորումն է: Հայտնի է, որ յուրաքանչյուր տեսակի ատոմում

այդ անցումները տեղի են ունենում որոշակի ֆիքսված հաճախությունների վրա: Կիրառական հետազոտությունն էլ ավելի կմեծանար, եթե հնարավոր լիներ փոփոխել անցումների հաճախությունը կամ «ստեղծել» նոր անցումներ: Եվ պարզվում է, որ դա կարելի է անել՝ օգտագործելով մագնիսական դաշտը:

«Մեր ինստիտուտում մշակվել են աշխարհում եզակի օպտիկական մանրբջիջներ, որոնք թույլ են տվել առաջին անգամ ատոմական գոլորշիներում գրանցել և համապարփակ հետազոտել մագնիսականորեն-հարուցված անցումներ: Դրանք այն անցումներն են, որոնք արգելված են սովորական պայմաններում, բայց դառնում են թույլատրված մագնիսական դաշտի որոշակի տիրույթում, ըստ որում, փոփոխելով մագնիսական դաշտը, փոփոխվում է նաև այդ անցումների հաճախությունը», - ասաց ինստիտուտի ատոմային սպեկտրասկոպիայի լաբորատորիայի վարիչ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Դավիթ Սարգսյանը:

Հետազոտությունների փորձարարական մասը կատարվել է ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում՝ առաջատար գիտաշխատող Արմեն Սարգսյանի կողմից: Տպագրված որոշ աշխատանքներ տեսական մասով կատարվել են Բուրգունդիայի համալսարանի (Ֆրանսիա) գիտնականներ պրոֆեսոր Կլոդ Լեռուայի և համատեղ ասպիրանտ Ռոդոլֆ Մոմբյեի մասնակցությամբ:

Հետազոտությունները կատարվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ իրականացված թեմատիկ 21T-1C005 ծրագրի շրջանակներում: Արդյունքները տպագրվել են «Optics Letters», «Physics Letters», «Optics Communications», «Journal of Quantitative Spectroscopy and Radiative Transfer» գիտական ամսագրերում:

Քվանտային ինտերնետ. հետազոտությունների արդյունքները հետաքրքրություն են առաջացրել միջազգային գիտական հանրությունում

Քվանտային տեղեկատվական տեխնոլոգիաների սպասվող արդյունքներից է քվանտային ինտերնետը: Դա քվանտային կապի համակարգ է, որը թույլ է տալիս փոխանակել ինֆորմացիան ցանցի հանգույցների միջև՝ հիմնված քվանտային ֆիզիկայի օրենքների վրա: Քվանտային ինտերնետն ընծայում է անմասնաճկ հնարավորություններ, որոնք անհնար են դասական տեղեկատվության օգտագործմամբ, ներառյալ բացարձակ անվտանգ հաղորդակցությունը, բացառիկ արագագործությունը և այլն: Սակայն քվանտային ինտերնետի իրականացման հիմնական խնդիրները դեռևս լուծված չեն: Քվանտային ցանցերում հաղորդակցությունն իրականացվում է ֆոտոնների միջոցով, որոնք գտնվում են որոշակի կոհերենտ վիճակներում՝ «քուբիթներում», որտեղ գրանցված է քվանտային ինֆորմացիան: Երկրամերձ ցանցերում ֆոտոնները տարածվում են ալիքատարներով, որոնցում տեղի ունեցող մարումային պրոցեսները՝ «դեկոհերենտությունը», քայքայում է ֆոտոնների կոհերենտ վիճակը և աղավաղում հաղորդվող ինֆորմացիան:

Քվանտային ինտերնետի հանգույցները, որտեղ գրանցվում, ձևափոխվում և վերարտադրվում է քվանտային ինֆորմացիան, պատրաստված են տարբեր նյութերից և աշխատում են տարբեր հաճախությունների վրա: Հետևաբար՝ հանգույցից հանգույց տարածվելիս ֆոտոնի հաճախությունը պետք է փոխակերպվի, ըստ որում այդ ընթացքում «ժամանակային քուբիթը» պետք է պահպանի իր տեսքը առանց աղավաղումների:

Վերը նշված գիտական խնդիրների ուղղությամբ վերջին տարիներին հետազոտություններ են կատարվում ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի տեսական ֆիզիկայի լաբորատորիայում: «Մեր աշխատանքում առաջին անգամ տեսականորեն մշակվել է մեխանիզմ՝ հիմնված «սառը» ատոմների համակարգում եռալիք պարամետրիկ փոխազդեցության վրա, որն ապահովում է սկզբնական ֆոտոնի ժամանակային մոդերում կողմավորված ինֆորմացիայի անկորուստ և կոհերենտ փոխանցումը հաճախության ձևափոխման ժամանակ», - ասաց լաբորատորիայի վարիչ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Յուրի Մալաքյանը: Նա նշեց, որ բացի գիտական արդյունքի հիմնարար արժեքից, այն ունի և կարևոր կիրառական նշանակություն, քանի որ քվանտային ցանցի մշակված մոդելը, որտեղ խիստ սեղմված են ֆոտոնների կորուստները, շատ ավելի հեշտ է իրականացնել, քան մինչ այժմ առաջարկված սխեմաները:

«Physical Review A» ամսագրում տպագրվել է «Quantum frequency conversion with coherent transfer of time-bin encoding» հոդվածը (Sh. Petrosyan and Yu. Malakyan, Phys. Rev. A 105, 052606 (2022)): Գիտական արդյունքը լայն արձագանք է գտել միջազգային գիտական հանրությունում՝ հիմնականում քվանտային ինֆորմացիոն տեխնոլոգիաների բնագավառում: Ստացվել է հինգ հրավեր՝ միջազգային գիտաժողովներում (ԱՄՆ, Ֆրանսիա, Ճապոնիա, Իտալիա) ներկայացնելու այս արդյունքները «հրավիրված խոսնակ» կարգավիճակով:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը (ՍԼՊԳՀ), ղեկավարվելով «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 20 և 21 հոդվածների դրույթներով և հանձնաժողովի՝ 2023 թ. աշխատանքային տարեկան ծրագրով, 2023 թ. անցկացրել է 35 միստ: Քննարկվել են Սևանա լճին և ջրավազանին առնչվող ՀՀ նախարարությունների, գերատեսչությունների, մարզպետարանների և մի շարք ընկերությունների կողմից ներկայացված ծրագրեր, նախագծեր, հաշվետվություններ:



ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի 2023 թ. գործունեության հաշվետվությունը

Հանձնաժողովին փորձաքննության ներկայացված 41 ծրագրերին, նախագծերին և առաջարկություններին տրվել է 16 բացասական և 25 դրական կարծիք: Բացասական կարծիք է տրվել Սևանա լճից ջրառի, լճի ջրավազանում տարատեսակ հանքավայրերի բացման և կեղտաջրերի մեխանիկական մաքրման կայանների արդիականացման, երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու վերաբերյալ ծրագրերին ու նախագծերին: Դրական կարծիք է տրվել Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման և օգտագործման, ոռոգման նպատակով «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծին, արևային ֆոտովոլտային էլեկտրակայանների հիմնման, Գեղարքունիքի մարզում երկրաբանական հետախուզական ուսումնասիրության աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտերին:

ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և Գեղարքունիքի մարզպետարանի համապատասխան ծառայության մասնագետների հետ: Համատեղ քննարկումներ են կազմակերպվել նաև ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի, ՀՀ շրջակա միջավայրի և տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների ներկայացուցիչների հետ:

Համագործակցելով միջազգային կազմակերպությունների հետ՝ հանձնաժողովը կազմակերպել է քննարկումներ «ADWISE Consulting» կազմակերպության ներկայացուցիչների հետ «Սևանա լճի շրջակա միջավայրի պահպանություն- EU4Sevan» ծրագրի ՄԱՁՁ բաղադրիչի շրջանակներում իրականացվող Սևանա լճի երկարաժամկետ ազգային տեսչականի սահմանման ճանապարհային քարտեզի իրականացման ընթացքի վերաբերյալ, EU4Sevan ծրագրի շրջանակներում իրականացվող և պլանավորվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության պարբերական թարմացման նպատակով, EU4Sevan ծրագրի շրջանակներում 2023 թ. ընթացքում կատարված աշխատանքների և հետագա քայլերի վերաբերյալ:

Հանձնաժողովը քննարկել է 19 առաջարկություն է ներկայացրել Սևանա լճից ջրբացթողումների, ջրակորուստների նվազեցման, բույսերի ջրապահանջի նորմերի մաքրման, լճի ջրածածկման ենթակա տարածքների մաքրման, բացասական հաշվեկշռի կարգավորման և բնակավայրերի կոյուղաջրերի խնդիրների վերաբերյալ: Հանձնաժողովի կողմից քննարկվել է հավանություն է տրվել լճում ձկան և խեցգետնի արդյունագործական որսի տարեկան առավելագույն չափաբանակների վերաբերյալ որոշման նախագծին:

Հանձնաժողովը պարբերաբար կազմակերպել է հանդիպումներ մամուլի ներկայացուցիչների հետ՝ հանրությանը ներկայացնելով Սևանա լճի հիմնախնդիրները: Հանձնաժողովի միստում քննարկվել է հաստատվել են 2024 թ. աշխատանքային ծրագիրը և տարեկան գործունեության հաշվետվությունը, որոնք ներկայացվել են ՀՀ ԳԱԱ նախագահին:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

Ընթացիկ տարում իրականացվել է այց Սևանա լճի ջրավազան, կազմակերպվել են քննարկումներ «Սևան

Ալցիայների հիվանդությանը նպաստող ամիլոիդ պեպտիդների ազդեցությունների գոյացումը կանխարգելող միջոցներ

ՀՀ ԳԱԱ Հրաչյա Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտում հետազոտվել են ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնում սինթեզված երկու նոր միացությունները, որոնք ընկնում են Ալցիայների հիվանդության զարգացմանը նպաստող ալցիայիլիտինսպեքտրա և բուստիլիլիտինսպեքտրա ֆերմենտների ակտիվությունը:

Ալցիայների հիվանդության հիմքն ամիլոիդ բետա պեպտիդների պեպտիդական ակտիվությունն է: Մասնավորապես ամիլոիդ բետան թունավոր ազդեցություն ունի ուղեղի նեյրոնների վրա և խթանում է միջբջջային հաղորդակցությունը:

Նկարագրվել են դրանց օպտիկական կլանման և ֆլուորեսցենցիայի սպեկտրները:

«Ստացված տվյալները վկայում են, որ նոր սինթեզված միացությունները նվազեցնում են ամիլոիդ բետա պեպտիդների ազդեցման գործընթացը և քայքայում պեպտիդների ձևավորված տոքսիկ ագրեգատները: Բջջային կուլտուրայում կատարված հետազոտությունները ցույց են տվել նաև, որ TVA և TVS միացությունները թուլացնում են ամիլոիդ բետա պեպտիդի ազդեցությունների ազդեցության հետևանքով առնետի ուղեղի հիպոկամպի բջիջների նեյրոգեգեներատիվ գործընթացները և մահացությունը՝ ցուցաբերելով նյարդապաշտպան հատկություն», - ասաց գիտական խմբի ղեկավար, ՀՀ ԳԱԱ Հրաչյա Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի տնօրեն Ալվարո Անտոնյանը:

Նա նշեց, որ այս միացությունների հետագա նախակլինիկական հետազոտությունների իրականացումը հնարավորություն կտա դրանց հիման վրա ստեղծելու Ալցիայների հիվանդության կանխարգելման և բուժման նոր դեղամիջոցներ:

Արդյունքներն ընդունված են տպագրության «Նեյրոքիմիա» միջազգային գիտական հանդեսում:

Աշխատանքն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության Գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ «Հակասցեպտիկոլիտինսպեքտրազային ակտիվությամբ օժտված քիմիական միացությունների սինթեզ և դրանցով Ալցիայների հիվանդության բուժման հնարավոր ուսումնասիրումը» թեմատիկ ծրագրի շրջանակներում:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀԱՅՈՑ ԱՐ-ՔԱՅԻՑ ԱՐ-ՔԱՆ ՀԻԱՅՐԵԼ Է ՕՏԱՐՆԵՐԻՆ

«Նայելով քո արծվային հայացքով՝ տեսնում էիր ժողովրդիդ դարերում...»  
Վալերի Բրյուսով

Տիգրան Մեծը Հին աշխարհի ամենանշանավոր պետական և ռազմական գործիչներից էր, հայոց արքաներից՝ ամենահզորը: Նրա կյանքն ու գործունեությունն արժանացել են ոչ միայն հայ, այլև օտար պատմիչների, գրողների, արվեստագետների բարձր գնահատականին: Բավական է նշել, որ համաշխարհային մեծության մի շարք կոմպոզիտորներ Տիգրան Մեծի կերպարին անդրադարձել են ավելի քան քսան դասական օպերաներում: Նրանց թվում են Պուչչինի, Սկարլատտին, Գյուկե, Հենդել, Վիվալդին և ուրիշներ: Նրան վրձնել են եվրոպացի հայտնի գեղանկարիչներ Ֆուգարոն, Ռոտերը և այլք:

Պատմագիր Վելլեսու Պատերկույոսը Տիգրան Մեծին համարում էր «իր ժամանակի հզորագույն թագավորը և թագավորներից մեծագույնը», իսկ ֆրանսիացի արևելագետ Ռենե Գրուսեի գնահատմամբ «Տիգրանն իր ժողովրդի ապրելու իրավունքն ապահովեց հավիտենականության համար»: Հայ մշակույթի երախտավոր Վ. Բրյուսովը 1916 թ. հայոց արքային է ձոնել հրաշալի մի բանաստեղծություն, որում գրում էր. «Դու, Տիգրան Մեծ, լույս ես տալիս աշխարհին...»:

«Ինքնին նա կորովալից էր, անկորովում ոգով»  
Կիկերոն

Ք. ա. II-I դդ. սահմանազխի Յայաստանի միջազգային դրությունը խիստ վատթարացել էր: Երկիրը հայտնվել էր «աշխարհաքաղաքական քրեանուն»՝ արևմուտքից Հռոմի, արևելքից Պարթևստանի սպառնալիքի ներքո: Ք.ա. 92թ. Եփրատի ափին տեղի ունեցած հռոմեա-պարթևական բանակցություններում կողմերը համաձայնության եկան Եփրատն իրենց ազդեցության և տիրապետության ոլորտների սահմանագիծ ճանաչելու մասին: Բանակցությունները բովանդակում էին մի կարևոր կետ ևս. Պարթևստանի արքան առաջարկում էր հռոմեական կողմին Տիգրան Մեծի դեմ կնքել ռազմական դաշինք:

Յայաստանի գոյության համար այդ ճակատագրական հեռանկարը չէր վրիպել Տիգրան Մեծի տեսադաշտից: Հռոմի և Պարթևստանի առաջխաղացմանը Տիգրան Մեծը հակադրեց ակտիվ պաշտպանության ստրատեգիան: Գործելով ռազմական և դիվանագիտական ասպարեզներում՝ հայոց արքան Մերձավոր Արևելքը միավորեց հզոր տերության մեջ և հակադրեց այն Հռոմին և Պարթևստանին:

Իր ողջ թագավորության ընթացքում (Ք.ա. 96-55 թթ.) Տիգրան Մեծը ցուցաբերեց բազմաբովանդակ, նպատակաուղղված գործունեության օրինակ, միանգամից մի քանի բարդ ներպետական և միջազգային դիվանագիտական խնդիրներ՝ հետևողականորեն լուծելու հմտություն:

Հռոմեական տերությունը, ի դեմս Հռոմի մեծագույն մտածող, հռետոր և քաղաքագետ Մարկոս Տուլիոս Կիկերոնի (Ցիցերոն), բարձր էր գնահատում Տիգրան Մեծի՝ որպես անհատի և պետական գործչի արժանիքները: Կիկերոնի բնութագրմամբ Տիգրանը կորովալից, հզոր կամքի տեր մարդ էր: Տիգրանակերտի անկումից հետո՝ Յայաստանի համար ծանր պահին՝ երկրի սիրտ Արտաշատի վրա հռոմեական բանակի գրոհի նախօրեին, հայոց արքան պահպանել է «իր թշնամական ոգին» Հռոմի

հանդեպ և հաղթանակելու մտադրությունը: Տիգրան Մեծն օժտված էր հոգեբանական մեծ և մշտական ծանրաբեռնվածություն կրելու կարողությամբ: Այդ հատկությունների համար նախապայման էին նրա անձնական տոկոսությունը, ֆիզիկական պատրաստվածությունն ու ամրությունը:

Հունահռոմեական արքայուհիները հավաստում են



Տիգրան Մեծի ֆիզիկական մեծ ուժը: Տիգրանն անձամբ է առաջնորդել իր բանակի գրեթե բոլոր արշավանքները: Պլուտարքոսը, Ապպիանոսը նշում են 72-ամյա Տիգրանի գլխավորած զրահավոր հեծելազորի երկու հզոր գրոհը հռոմեական բանակի դեմ Ք.ա. 68թ.: Նա հեշտությամբ էր ծիպվարում 74 տարեկանում: Երիվարով հասնելով հռոմեական բանակատեղի՝ Պոմպեոսի հետ հանդիպման, նա մտույզի վրայից ինքնուրույն էր ցատկել գետինի. 74 տարեկանում նա հայր է դարձել, ունեցել դուստր: Տիգրան Մեծի ժամանակակից, հռոմեացի պատմաբան Գ. Սալյուստիոսը պահպանել է հայոց արքայի ֆիզիկական հզորությունը պատկերող հետաքրքիր մի դրվագ. «70 տարեկանում նա զրահավորված ընդոստում էր մտույզի վրա»: Կարևոր է նշել, որ ասպանակվել այդ ժամանակներում չէր գործածվում (ասպանդակի գյուտն արվել է 2-ին հազարամյակում Ք.հ. III դարում), և հետաքրքիր՝ Տիգրանն առանց կողմնակի օգնության ընդոստում էր մտույզի վրա՝ թամբի վրա հենվելով և ձգվելով իր բազուկ-



Գծանկարը Ռ.ՄԱՆԱՍԵՐՅԱՆԻ

ներով: Արքայական երիվարի վզակոթի (մնդավի) բարձրությունը 150-155 սմ էր, և այդ տեսակի ցատկերի ժամանակ, երբ արքան զրահավորված էր, նա պիտի կրեր առնվազն 10-15 կգ երկաթե զրահ:

Քաղաքական նպատակահարմարության սկզբունքին հետևելով՝ նա կարող էր, ինչպես վկայում են փաստերը, մի դեպքում լինել անողոք և դաժան, մյուս դեպքում՝ զիջող ու մեղմաբար: Գահաժառանգ որդու՝ Արտաշեսի մահապատիժը կատարվել էր ոչ միայն արքայազնի կողմից հոր հանդեպ անհարգալից պահվածքի, ընդունված արարողակարգի խախտման համար (որտրդության ժամանակ սլացող երիվարից ընկած և գետինը զարկվելուց ուշաթափված Տիգրանի գլխից արքայազնը պոկեց և իր վրա դրեց ապարոշը՝ արքայանշանը): Հայոց պետության ապագայի համար պատասխանատվության գիտակցմամբ չէր արդյո՞ք թելադրված Տիգրան Մեծի այդ անողոք և տեղում կայացված վճիռը: Դա նրա կողմից զոհաբերություն էր ազգային-պետական շահին, ողորմածությունը բացառող խստապահանջության օրինակ:

Տիգրան Մեծի անձնական հատկանիշները՝ մտավոր, կամային, ֆիզիկական որակների միաձուլվածք, պայմանավորել են նրա գործունեության հաջող ընթացքը և նրա վերջնական արդյունքը՝ Յայաստանի փրկությունը և մեծ տերությունների կողմից Յայաստանի տարածքային ամբողջականության ճանաչումը:

Տիգրան Մեծի գործունեությունը բարձր էր գնահատվել հակառակորդ տերությունների կողմից, իսկ հայկական պատմական հիշողության մեջ՝ Մովսես Խորենացու երկում նա հայոց մեծագույն տիրակալ է, հայրենիքի պաշտպան, չարի ուժերի դեմ պայքարում հաղթող:

Ռուբեն ՄԱՆԱՍԵՐՅԱՆ  
Պատմական գիտությունների դոկտոր

ՄԵՐ ՄԵԾԵՐԻ ԱՄԱՆՈՐՅԱ ՄՏՈՐՈՒՄՆԵՐԻՑ

ԿՈՄԻՏԱՍԻ ՆՈՐ ՏԱՐԻՆԵՐԻՑ ՄԵԿԸ



Նոր տարի էր և Կոմիտասը, ինչպես միշտ, պետք էր գնար բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի տուն, ուր ամեն տարեմուտի սպասում էին նրան: Բանաստեղծը շատ երեխաներ ուներ, նրա մոտ էր ապրում նաև փոքրիկ Շամունիկը՝ բանաստեղծի հորեղբոր աղջիկը: Այս աղջիկը հրաշալի երգում էր, երգում էր «Կարթակիկը», «Ախ մարալ ջանը»... և Կոմիտասը լսում էր նրան: Նոր տարի էր, հին մոր տարիներից մեկը: Այդ օրը՝ առավոտյան, Կոմիտասին տխուր լուրեր էին բերել Սասունից, ու նա ոչ մի տեղ չէր ուզում գնալ. որոշել էր՝ իր վշտերի ու մտքերի հետ կնքա իր խցում:

Բայց ելավ տեղից, բամբակից մորուք կպցրեց, ճերմակ վերնոց հագավ, ձեռքն առավ թթեմու մի ճյուղ, սրինգը գրպանը դրեց և հին Վաղարշապատի հին փողոցներով գնաց դեպի բանաստեղծի տուն: Երբ նա մտավ բանաստեղծի բակը, գրպանից հանեց սրինգն ու սկսեց նվագել... Երեխաների ուրախությանը չափ չկար: Բոլորը վազեցին դեպի պատուհանը, քանի որ ամեն տարեմուտի Կոմիտասը այդպես ճերմակ մորուքով, ձեռնափայտով ու սրինգ նվագելով ներս էր մտնում պատուհանից և կանգնելով լուսամուտի գոգին՝ ասում էր. - Գալը բարի, Նոր տարի:

Այս անգամ էլ նա բացեց պատուհանը, որը նրա համար կիսաբաց էին թողել, կանգնեց լուսամուտի մոտ և նվագեց, նվագեց երկար և ոչինչ չասաց: Իջավ, գրկեց իր շուրջը հավաքված երեխաներին, հետո մոտեցավ բանաստեղծին ու ասաց. -Զուր ես գալիս, Նոր տարի... -Ի՞նչ է եղել... -Սասունից տագնապալի լուրեր են եկել: Առաջին տարին էր, որ երեխաները չլսեցին նրա ծիծաղը, նա ոչինչ չասաց երեխաներին, մի երկու տխուր մեղեդի նվագեց, հետո երկար զրուցեց բանաստեղծի հետ, մոռացավ պոկել իր ճերմակ բամբակից մորուքը ու այդպես էլ վերադարձավ տուն:

Սա վերջին Նոր տարին էր, որ այցելեց նա բանաստեղծին, և երբ շատ տարիներ անց հուղարկավորում էին նրան, փոքրիկ Շամունեն, որ արդեն հասուն կին էր, վերջին անգամ ապակու տակից տեսավ նրա հավիտենական քնով քնած դեմքը, և թվաց նրան, թե ինչպես տարիներ առաջ, պատուհանի ետևից տեսնում է նրան, իսկ մորուքը ճերմակ այն բամբակի հետքերն են, որ կպցնում էր վարդապետը Նոր տարվա օրերին: Ու բոլորի համար անսպասելի ծունկի իջավ դագաղի առաջ և մրմնջաց.

-Գալը բարի, Նոր տարի... Իրոք, միշտ չէ, որ հայն ուրախ է դիմավորել Ամանորը և իզուր չէ, որ ամեն տարեմուտի կրկնել է ծանոթ երգի բառերը. «Երնեթ թե այս Նոր տարին վերջ տա հայի ցավերին...»: Բայց և ամեն անգամ, հույսով ու լավատեսությամբ, արցունքների միջից ժպտալով, բաց է արել իր տան ու հոգու դռները Նոր տարվա առաջ ու շնջացել.

-Գալը բարի, Նոր տարի... Իրոք, միշտ չէ, որ հայն ուրախ է դիմավորել Ամանորը և իզուր չէ, որ ամեն տարեմուտի կրկնել է ծանոթ երգի բառերը. «Երնեթ թե այս Նոր տարին վերջ տա հայի ցավերին...»: Բայց և ամեն անգամ, հույսով ու լավատեսությամբ, արցունքների միջից ժպտալով, բաց է արել իր տան ու հոգու դռները Նոր տարվա առաջ ու շնջացել.

ՀԻՐԱՇԻ ԱՄԱՆՈՐՅԱ ԽՈՍՔԵՐԻՑ



...Շնորհավորում են իմ հայոց և աշխարհի բոլոր ազգերի Նոր տարին: Եթե այժմ ձեռքիս տակ լինեին իմ հայոց երկու աչքերի պես նրա երկու ծովակները, ես, խղճիս հրամանով, զինու կփոխեի նրանց ջրերը և կլցնեի բոլոր ազգերի բաժակները, ինչպես ծովակներիցս մեկն է լույսով ու հույսով լցվում: Ուրեմն՝ Սևանի բյուրեղյա լույսի բաժակով Հույսի կենացն են խմում...

Այսօր ազգային համբուրելի հպարտությամբ է լցվում իմ սիրտը, երբ լսում եմ, որ հայոց հին, բազմադարյան և նոր ծագած աստղերը մրցման են ելնում ուրիշ ազգերի անմահ աստղերի հետ, երբ հայոց նարեկացիները բարձրանում են իրենց իսկական գահին՝ համաշխարհային ճանաչման:

Եվ երեկ այն ազգին, որ սրտեր էր գրավում և ոչ թե... հողեր, որ լեզու է տալիս և ոչ թե... լեզու պոկում...

Բայց ազգին պահողը կամ վերստեղծողը մայրենի լեզուն է: Այդ իսկ պատճառով տագնապալից սրտով այս Նոր տարվան էլ հիշում եմ հայոց սփյուռքը: Այնտեղ կյանքի և մահվան կրակի մեջ է հայոց լեզուն: Ուրեմն՝ հարկավոր է հայոց լեզվի պաշտպանությունն ամենօրյա դարձնել ամենուրեք:

Այսօր, շնորհավորելով ամենքիդ Նոր տարին, ուզում եմ ահագանգել, որ ամեն մի ազգի զավակ պիտի պաշտե իր մայրենին: Այն պատանին, որը գիտե յոթ լեզու, յոթ անգամ համբուրելի է, բայց այդ մույն պատանին, եթե անգոսնում է իր մայրենի լեզուն, եթե ամենօրյա օդ չէ նրա բերանում իր մայրենին, նա յոթ հազար անգամ է նզովելի:

Ինչպես որ սուրբ է ցորենի արտի նման մի հասկը, այնպես էլ սուրբ է ամեն մի մայրենի լեզու: Ազգերը նման են դաշտում սփռված ծաղիկների, իսկ նրանց մշակույթը ծաղկանց բուրմունքն ու գույներն են: Եթե որևէ ծաղիկ պակասի, մի՞թե դաշտի քաղցրությունը չի պակասի:

Նոր տարվա հույսերը նման են Նոր տարվա տոնածառին, որոնք այս գիշեր լուսազարդվում են աշխարհի բոլոր տանիքների տակ: Ուզում եմ հազար սրտով ցանկանալ, որ այդ հույսերը Նոր տարվա տոնածառի նման մի երկու օր լույս տալով՝ դուրս չնետվեն կմախքացած: Շնորհավոր ամենքին:

ՆՈՐԱՅՐ ՀՈՒՆԱՆԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ



Կյանքից հեռացավ գիտության և կրթության երախտավոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, միջազգային ճանաչում ունեցող մաթեմատիկոս Նորայր Հունանի Առաքելյանը:

Նորայր Առաքելյանը ծնվել է 1936 թ. հունիսի 17-ին Արթիկի շրջանի Մեղրաշեն գյուղում, մանկավարժի ընտանիքում: 1954-1958 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում, 1958 թ. ավարտել է այն «Մաթեմատիկա» մասնագիտության գծով:

1962 թ. պաշտպանել է թեկնածուականատենախոսություն ակադեմիկոս Մ. Մ. Զորբաշյանի ղեկավարությամբ, իսկ 1971 թ. դոկտորականատենախոսություն խՍՀՄ ԳԱ Վ. Ստեկլովի անվան մաթեմատիկայի ինստիտուտում: 1989 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1974 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, իսկ 1990 թ.՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

Ն. Առաքելյանի աշխատանքային գործունեությունը կապված է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի և Երևանի պետական համալսարանի հետ: 1971-1989 թթ. աշխատել է Մաթեմատիկայի ինստիտուտում՝ որպես բաժնի վարիչ, փոխտնօրեն: 1989-1991 և 1997-2006 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտի տնօրեն, 1991-1993 թթ.՝ Երևանի պետական համալսարանի ռեկտոր, 1992-2000 թթ.՝ ԵՊՀ ֆունկցիաների տեսության ամբիոնի վարիչ: 2006-2016 թթ. ՀՀ ԳԱԱ մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարն էր, ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ:

Նորայր Առաքելյանն ակնառու ներդրում ունի կոմպլեքս անալիզի և մոտավորությունների տեսության բնագավառներում: Նրա գիտական արդյունքներն արագ զնահատվեցին միջազգային մաթեմատիկական հանրության կողմից: Առաքելյանի ծեռնոց, Առաքելյանի բազմություն, Առաքելյանի թեորեմ տերմինները տարածում և կիրառում գտան մոտավորությունների տեսության շրջանակներում:

2004 թ. Ն. Առաքելյանն ընտրվել է Տրիբի համալսարանի (Գերմանիա) պատվավոր դոկտոր, ինչը նրա միջազգային գիտական հեղինակության մասին է վկայում:

Մեծ է նրա ներդրումը հայկական մաթեմատիկական դպրոցի կայացման և միջազգային հեղինակության արժանանալու գործում:

Գիտության մեջ ունեցած նշանակալի ավանդի համար ակադեմիկոս Նորայր Առաքելյանն արժանացել է բազմաթիվ մեդալների և պարգևների: Նրան շնորհվել է ՀՀ գիտության վաստակավոր գործիչ կոչում (2003 թ.), պարգևատրվել է «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով (2013 թ.):

Գիտությունների ազգային ակադեմիայի գիտական կոլեկտիվը սգում է ակադեմիկոս Նորայր Առաքելյանի մահը և ցավակցում նրա հարազատներին և գործընկերներին: Նրա հիշատակը միշտ վառ կմնա բոլորիս սրտերում:

**ՀՀ ԳԱԱ նախագահություն**  
**Մաթեմատիկական և տեխնիկական**  
**գիտությունների բաժանմունք**  
**Մաթեմատիկայի ինստիտուտ**

ՀՀ ԳԱԱ գիտական հանդեսների ներկայացվածությունը միջազգային հարթակներում

Գիտատեխնիկական առաջընթացի ներկայիս տեսլանքը ստիպեցին հրատարակիչներին նորովի մտնենալ գիտական ամսագրերի տպագրությանը: Անհրաժեշտ պայման դարձավ թղթային հրատարակություններից անցում կատարել դրանց էլեկտրոնային համարժեքներին: Չէ՞ որ գիտնականին հետաքրքրում է, թե իր կատարած հետազոտության արդյունքները որքան արագ հասանելի կդառնան գիտական հանրությանը: Արդյունքում շահում է թե հողվածի հեղինակը, քանի որ էլեկտրոնային ամսագրերի պարագայում կտրուկ բարձրանում են գիտնականի գիտաշահական ցուցանիշները և հողվածի տեսանելիության շրջանակը, և թե՛ ընթերցողը, քանի որ նրան շատ արագ հասանելի են դառնում իր հետազոտությունների թեմային առնչվող վերջին հրատարակությունները:

ԳԱԱ բոլոր ամսագրերը, թվով 27 անուն, ներկայումս ունեն իրենց էլեկտրոնային համարժեքները, դրանք ազատ դիտման և անվճար ներբեռնման կարգավիճակով հասանելի են ինչպես ԳԱԱ, այնպես էլ Հիմնարար գիտական գրադարանի կայքէջերից:

Ամսագրային հրատարակությունների թվայնացման աշխատանքները ԳԱԱ-ում սկսվել են 2008 թվականից և կրում են շարունակական բնույթ: Այսօր, բացի ամսագրերից, թվայնացվում են նաև ԳԱԱ -ի կողմից տպագրված գրքերը:

Միջազգային հրատարակչական տներն ուշադիր հետևում են էլեկտրոնային գիտական ամսագրերի շուկայում առկա զարգացումներին, աշխատում են հնարավորինս շատ բարձրարժեք գիտական հրատարակություններ ներառել իրենց առևտրային փաթեթներ: Խոշորագույններից մեկը «EBSCO» հրատարակչությունն է, տարեկան 3 միլիարդ դոլար վաճառքի ցուցանիշով, որի միայն «Academic Search Complete» շտեմարանը պարունակում է ավելի քան 8500 գիտական ամսագիր: Իսկ այդպիսի շտեմարանների քանակը գերազանցում է չորս հարյուրը:

ԳԱԱ «Բնական գիտություններ» էլեկտրոնային ամսագիրն առաջինն էր, որ 2005թ. ընդգրկվեց «EBSCO»-հիմնական շտեմարան:

2013 թ. սկսած «EBSCO» հրատարակչությունը համագործակցում է ԳԱԱ նախագահության հետ՝ իր տարբեր շտեմարաններ ներառելով իրեն հետաքրքրող ԳԱԱ ամսագրերը:

2013-2021 թթ. ընթացքում ԳԱԱ հետևյալ ամսագրերը «EBSCO» հրատարակչությունը ներառել է իր տարբեր փաթեթներ: Այդ ամսագրերն են.

- «Պատմաբանասիրական հանդես»՝ ներառված է «EBSCO»-ի «Central & Eastern European Academic Source» շտեմարան:
- «Հայաստանի կենսաբանական հանդես»՝ ներառված է

«EBSCO»-ի «Academic Search Ultimate» շտեմարան:

• «Armenian Journal of Mathematics»՝ ներառված է «EBSCO»-ի «Academic Search Ultimate» շտեմարան:

• «Armenian Journal of Physics»՝ ներառված է «EBSCO»-ի «Academic Search Ultimate» շտեմարան:

• «ՀՀ ԳԱԱ Զեկույցներ»՝ ներառված է «EBSCO»-ի «Applied Science & Technology Source Ultimate» շտեմարան:

• «Հայաստանի ԳԱԱ տեղեկագիր. Մեխանիկա»՝ ներառված է «EBSCO»-ի «Academic Search Ultimate» շտեմարան:

2024 թ. հունվարի 1-ից Գիտությունների ազգային ակադեմիայի «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսը և ներառվեց «EBSCO»-ի «Central & Eastern European Academic Source» շտեմարան:



մարան:

Այս ամսագրերի ներկայացվածությունը նման խոշոր հրատարակչական ընկերության ծառայությունների փաթեթում ևս մեկ անգամ փաստում է ԳԱԱ ամսագրերի բարձր վարկանիշը, նպաստում է հայ գիտնականների տեսանելիության բարձրացմանը, ինչպես նաև շոշափելի քայլ է այդ ամսագրերի համար, որպեսզի մոտ ապագայում դրանք ներառվեն «Scopus» և «Web of Science» շտեմարաններ: Սրանք վկայակոչումներ և համառոտագրություններ գեներացնող հարթակներ են բարձրարժեք գիտական հրատարակությունների, գիտնականների, գիտական կենտրոնների համար:

**Տղարան ԶԱՐԳԱՐՅԱՆ**  
**ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի փոխտնօրեն**

ՄԱՏԻՆՆԵՐԸ ՀԱՐՑ Է ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ

Ի՞նչ պետք է անել Հայաստանի էներգետիկայի բնագավառում

Հայաստանի տնտեսության զարգացումը մեծապես կապված է նաև էներգետիկ ոլորտի զարգացման հետ: Մշակվել և ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիր մինչև 2040 թ.» փաստաթուղթը:

Հայաստանի էլեկտրաէներգիան հիմնականում արտադրվում է 3 տիպի՝ ատոմային, հիդրո և ջերմային կայաններում, որից շուրջ 39 տոկոսը՝ ԱԷ-ում, մնացած 60%-ը՝ գրեթե հավասարապես հիդրո և ջերմային կայաններում:

Հայկական ատոմակայանի՝ 2026 թվականից հետո շահագործման ժամկետի երկարաձգումը և այդ ժամկետի ավարտից հետո նոր ատոմակայանի կառուցումը մեր երկրի համար կարևոր խնդիրներից են:

Առաջիկայում կիրականացվեն և 7 արևային ֆոտովոլտային կայանների կառուցման մրցույթներ՝ շուրջ 520 ՄՎտ ընդհանուր դրվածքային հզորությամբ, որոնցից երկուսի հզորությունը կկազմի համապատասխանաբար 200 ՄՎտ:

ՀՀ կառավարությունը նպատակ ունի մինչև 2030 թ. արևային էներգիայի արտադրության մասնաբաժինը ընդհանուրի մեջ հասցնելու առնվազն 15%-ի կամ 1.8 միլիարդ ԿՎտժ-ի: Այդ նպատակով կկառուցվեն շուրջ 1000 ՄՎտ հզորությամբ արևային կայաններ, ներառյալ ինքնավարները:

Եթե 2026 թ. հետո ԱԷ-ի անվտանգ շահագործումը ուսումնասիրությունների արդյունքում հիմնավորվի, կառավարությունը մտադիր է այն շահագործել առնվազն մինչև 2036թ.: Դրա համար կպահանջվի լրացուցիչ 150 միլիոն ԱՄՆ դոլար ներդրում:

Առաջիկա յոթ տարիների ընթացքում էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտում կներդրվի շուրջ 1.5 միլիարդ ԱՄՆ դոլար: 2025-2040 թթ. ընթացքում նախատեսվում է մինչև 500 ՄՎտ հզորության հողմային կայանների կառուցում:

107.9 միլիոն եվրո գումարով կառուցվում են Իրան-Հայաստան 400ԿՎ լարման երկշրջա էլեկտրահաղորդման օղակի գիծը և 400 ԿՎ լարման «Նորավան» ենթակայանը: Էլեկտրահաղորդման գծի և ենթակայանի կառուցումը հնարավորություն կտա 2 երկրների էներգահամակարգերի միջև էլեկտրաէներգիայի փոխանակման հզորությունը ներկայիս 350 ՄՎտ-ից հասցնելու մինչև 1200 ՄՎտ-ի:

Մեր կարծիքով Հայաստանի էներգետիկ բնագավառի զարգացմանը կարող է նպաստել ներքոհիշյալ աշխատանքների իրականացումը:

1. Նախագծել և կառուցել Շնողի և Լոռի բերդի հիդրոէլեկտրակայանները: Տարեկան կարող են արտադրել ավելի քան 500 միլիոն ԿՎտժ էլեկտրաէներգիա: Ընդ որում հնարավոր է ստեղծել խառը տիպի կազմակերպություն՝ պետության ընդգրկմամբ: Այսինքն պետությունը դառնում է մոտ 20 տոկոսի սեփականատեր, իսկ մյուս մասը կառուցվում է բնակչության և կազմակերպությունների միջոցներով:

2. Կարևոր է նաև Գյումրի քաղաքում ունենալ զազատուրբինային ջեռուցման ջերմային էլեկտրակայան: Այն հնարավորություն կտա միաժամանակ արտադրելու էլեկտրական և ջերմային էներգիա, լուծելու բազմաթիվ տնտեսական հարցեր:

3. ՀՀ-ի բոլոր բնակավայրերի համար կազմել էներգետիկական անձնագիր, գտնել բոլոր հնարավոր դեպքերի համար (տարբերային աղետներ, պատերազմական իրավիճակ և այլն) լավագույն լուծումներ:



4. Անհրաժեշտ է մշակել ՀՀ-ի էներգետիկայի տնտեսագիտական համալիր մոտեցումները՝ կառավարում, նոր զարգացող ուղղությունների գծով մասնագետների պատրաստում և այլն, որի իրականացման դեպքում կարող ենք հասնել լուրջ հաջողությունների կարճ ժամանակահատվածի կտրվածքով:

5. Վերջին տասնամյակների ընթացքում ՀՀ-ում կառուցվել են բազմաթիվ փոքր հզորությամբ հիդրոէլեկտրակայաններ, որոնց հիդրոտեխնիկական կառուցվածքներն ունեն ցածր արդյունավետություն: Արդյունքում տուժում ենք տնտեսագիտական տեսակետից: Արտադրվում է քիչ քանակությամբ էլեկտրական էներգիա:

6. Կարևոր է նաև նախագծել և կառուցել Հրազդանի հիդրոակունուլյացիոն կայանը: Այն հնարավորություն կընձեռնի արդյունավետ օգտագործելու գիշերային ժամերին արտադրված էլեկտրաէներգիան, իսկ պիկային ժամերին արտադրելու էժան էլեկտրաէներգիա:

7. Առաջարկում ենք տեղական նշանակության ջերմամատակարարման համակարգերում օգտագործել արևային էներգիան՝ համատեղելով կենսազանգվածով, կամ արևային էներգիան համակցել թափոններից ստացված էներգիայով: Այսպիսի հիբրիդ համակարգերի արդյունավետությունը կավելանա առնվազն 20 տոկոսով: Համակարգերում կարող են օգտագործվել նաև ջերմային պոմպեր, ինվերտորներ, կաթսաներ:

8. Գյումրի և Վանաձոր քաղաքներում անհրաժեշտ է ունենալ միջին հզորության շոգեզազատուրբինային ջեռուցման ՋԷԿ, որոնք հնարավորություն կտան միաժամանակ արտադրելու էլեկտրական և ջերմային էներգիա, խնայելու վառելիքաէներգետիկ ռեսուրսներ:

9. Լուրջ ուշադրություն պետք է դարձնել էներգետիկական ճկուն դիվանագիտության մշակմանը և իրականացմանը:

10. Որոշ բուհերում պետք է կազմակերպել մասնագիտացված հատուկ դասընթացներ:

**Ստեփան ՊԱՊԻՅԱՆ**  
**Տեխնիկական գիտությունների թեկնածու**

**Գիտություն**  
**Գլխավոր խմբագիր՝ Վ.ՅՈՎԱԿԻՄՅԱՆ**  
**Խմբագիր՝ Ա.ՍԱՀԱԿՅԱՆ**  
Երևան-19, Մարշալ Բաղդասյան 24/4, հեռ. 58-18-23, 3-16  
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:  
Ստորագրված է տպագրության՝ 24.01.2024 թ.:  
**"ГИТУТЮН" ("Hayka") газета НАН РА**